

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Հ.ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՏԴ 811.19
ԳՄԴ 81.2Հ
Հ 854

Լ. Շ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ բանասիրական
գիտությունների թեկնածու՝ **Գ.Մ.Մխիթարյան**

**ԳՐԱԲԱՐԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ
ԽՄԲԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ**

(III մաս)

Խաղողագործություն-գինեգործություն

Հովհաննիսյան Լ. Շ.
Հ 854 Գրաբարի բառապաշարի իմաստային
խմբերի քննություն/ Լ. Շ. Հովհաննիսյան.- Եր.:
ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2018.
III մաս: Խաղողագործություն-գինեգործություն. -
67 էջ:

ՀՏԴ 811.19
ԳՄԴ 81.2Հ

Ե Ր Ե Վ Ա Ն
ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն
2018

ISBN 978-5-8080-1333-9
© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն. 2018
© Հովհաննիսյան Լ.Շ., 2018

ԱՌԱՋԱԲԱՆ

Հայաստանը վաղնջական շրջանից եղել է վայրի խաղողի, նաև խաղողի ընտանեցման հիմնական տարածք, որը հաստատվում է հնագիտական տվյալներով: Ըստ պեղումների արդյունքների՝ Եղեգիս գետի վերին հոսանքներում հայտնաբերված խաղողի բրածո տերևների դրոշմները 4-5 միլիոն տարվա վաղեմություն ունեն, իսկ Առատաշենի նեոլիթյան բնակավայրից հայտնաբերված գտածոները թվագրվում են մ.թ.ա. 6-րդ հազարամյակի առաջին կեսով: Արարատյան դաշտը եղել է մշակովի խաղողի տեղական տեսակների բուծման հնագույն կենտրոն, որի հաստատումն են Թեյշաբահինի քաղաքի գինու պահեստներից հայտնաբերված խաղողի կորիզները: Վերջիններիս և Արարատյան դաշտի ներկայիս խաղողի ձևաբանական ընդհանրությունները ցույց են տալիս, որ «Արարատյան դաշտի ներկայիս խաղողի տեսակները Ք. Ա. VII դարում Թեյշեբահինիում մշակվող խաղողի ժառանգորդներն են»¹:

Խաղողագործության հնագույն ակունքները ենթադրում են նաև Հայաստանում գինեգործության վաղնջական շրջանի առկայություն, որը հաստատվում է ինչպես օտարալեզու արձանագրություններում ու գրականության ընձեռած փաստերով, այնպես էլ հնագիտական տվյալներով: «Արենի-1» քարայրում հայտնաբերված նյութերը և դրանց քննության արդյունքները վկայում են Հայաստանում մ.թ.ա. V հազարամյակում գինեգործության զարգացման բարձր մակարդակը:

¹ Ս. Հարությունյան, Ա. Քալանթարյան, Հ. Պետրոսյան, Գ. Մարգարյան, Հ. Մելքոնյան, Ս. Հորոսյան, Պ. Ավետիսյան, *Գինին հայոց ավանդական մշակույթում*, Ե., 2005, էջ 14-18:

Սույն աշխատանքում մանրամասն քննված են գրաբարում խաղողագործություն և գինեգործություն իմաստային դաշտի անվանումները, այդ բառերի ծագումնաբանությանը վերաբերող հարցերը, բառային միավորների բառակազմական, գործառական առանձնահատկությունները:

Գրաբարյան շրջանի վկայություններից զատ անդրադարձել ենք տարբեր բարբառներում ու միջին հայերենում գործածական որոշ բառերի, որոնք հնդեվրոպական ծագումով բնիկ հայերեն բառեր են կամ հին փոխառություններ:

Իմաստային խմբերի մանրագնին քննությունը կարևորվում է նախ և առաջ տվյալ լեզվի բառապաշարը համապարփակ ներկայացնելու առումով: Հայոց լեզվի պատմությանը վերաբերող աշխատություններում նույնպես կան իմաստային խմբերի դասակարգումներ: Հ. Աճառյանը հայերենի հնդեվրոպական բառապաշարը ներկայացնում է ըստ 22 իմաստային խմբերի (ՀԼՊ, I, 108-112), Գ. Ջահուկյանը՝ 23 (ՀԼՊ, 258-274): Հեղինակները նշում են հիմնականում բառերի հ.-ե. ձևերը՝ չանդրադառնալով գործառական առանձնահատկություններին, վկայության ժամանակաշրջանին և այլ մանրամասների: Նկատելի է նաև, որ ներառված են ոչ բոլոր բառերը:

Դուրզն-ինչ չենք թերագնահատում երկու մեծագույն հայագետների վաստակը, քանի որ դասակարգումներում ընդգրկված նյութի տարաբնույթ քննությունը նրանց հիմնարար աշխատանքի նպատակադրումը չէր:

Դասակարգումները կատարելիս օգտվել ենք ոչ միայն բառարաններից, այլև գրաբար մատենագրության ընձեռած նյութից, որը հնարավորություն է տալիս բացահայտելու մի շարք նոր իրողություններ: Օրինակ՝ պարզվում է, որ 5-րդ դ. հայ ինքնուրույն գրականության մեջ *խաղող* բառը վկայված չէ. բառը վկայված է միայն թարգմանական գրականության

մեջ, հատկապես Աստվածաշնչում: *Խաղող* բառի ոչ հաճախական կիրառության պատճառն այն է, որ *խաղող* հասկացությունը գրաբարում արտահայտվում է *որթ*, *զինի*, նաև *այգի* բառերով: Աշխատանքում բերվում են համապատասխան օրինակներ:

Մատենագրության տվյալների ուշադիր քննությունը բացահայտում է բառերի հաճախականության, հոմանիշության, բազմիմաստության նրբերանգներ, որոնք գրաբարի բառարաններում արտացոլված չեն: Օրինակ՝ բառարաններում *այգի*, *զինի* բառերի «խաղող» իմաստը արձանագրված չէ:

Հավելենք, որ լեզվաբանական այս և այլ կարգի իրողություններ կան ոչ միայն *խաղողագործության-զինեգործության* բնագավառին վերաբերող բառաշերտում, այլև իմաստային այլ խմբերում:

«Գրաբարի բառապաշարի իմաստային խմբերի քննություն» երկու աշխատություններում (I մաս, Ե. 2008, II մաս, Ե., 2012) քննել ենք 10 իմաստային խումբ՝ 30 ենթախմբերով:

Սույն աշխատանքը այդ բնագավառին վերաբերող երրորդ մենագրությունն է: Առաջին գլխում անդրադարձել ենք *խաղող*, երկրորդ գլխում՝ *զինի* իմաստային խմբի բառապաշարին: Կատարված են մի շարք դասակարգումներ: Բնականաբար, առարկություններ կարող են լինել այս կամ այն միավորը տվյալ և ոչ թե հարակից խմբում ներառելու, դասակարգումների անվանումների, ընդգրկված նյութի ծավալի վերաբերյալ:

Միշտ չէ, որ հնարավոր է կատարյալ, անթերի դասակարգումներ՝ պայմանավորված բառերի մերձիմաստային կապերով, համանունության, բազմիմաստության, իմաստային նրբերանգների, գործառական յուրահատկությունների,

վկայության տարբեր ժամանակաշրջանների և այլ գործոններով:

Աշխատանքում, ըստ հնարավորինս, օգտագործել ենք մատենագրության և բառարանագրության ընձեռած նյութը, անհրաժեշտության դեպքում նշվել են այլ լեզուների համապատասխան զուգահեռները: Անդրադարձել ենք քննության առարկա բնագավառին վերաբերող ուսումնասիրողների դիտարկումներին:

Որպես առաջաբանի ամփոփում՝ նորից շեշտենք, որ չթերագնահատելով բառարանային տվյալները, իմաստային խմբերի քննության ժամանակ էական և կարևոր պետք է համարել բնագրային վկայությունները:

ԳԼՈՒԽ I ԽԱՂՈՂԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Բանասեր Կ. Գաբրիլյանը խաղողը համարում է «Նոյի օրերեն սկսեալ մեր երկրի ամենապատուական բերք և տունկ, որքան իր պտուղովը, նոյնքան և իր գինիովը հոչակաւոր» (Գաբրիլեան, 79):

Խաղողի, խաղողագործական մշակույթի վաղնջական ակունքների փաստը տրամաբանորեն ենթադրում է այդ բնագավառին առնչվող մի շարք հին անվանումների (կարելի է ասել տերմինների) գոյություն, որը և հաստատվում է մատենագրության տվյալներով, այդ կարգի բառերի ստուգաբանություններով:

Գրաբար մատենագրության մեջ ավանդված բառերից զատ կանոնադաշտնաձև նաև բարբառներում գործածական մի շարք բառերի, որոնք կարելի է ներառել հայերենի հնագույն բառաշերտի մեջ:

Խաղող բառի ծագման վերաբերյալ կան մի շարք կարծիքներ:

ՀԱԲ-ում բառը ստուգաբանված չէ: Բառարանում բերված ստուգաբանական փորձերից թերևս որոշակի հետաքրքրություն է ներկայացնում Լագարդի կարծիքը, ըստ որի՝ հայերեն *խաղող*-ը առնչվում է դպտերեն *aloli*-ի հետ: (Տե՛ս ՀԱԲ, II, 322): Գ. Ղափանցյանը նշում է նաև հին եգիպտերեն *arēr,uarer* «որթ» զուգահեռը: (Ղափանցյան, 2008, 17): Ըստ Գ. Չախուրկյանի՝ *խաղող* «որթ և պտուղ» փոխառություն՝ թերևս խուռերեն *halisi* «մի պտուղ» (ՋՀՄԲ, 313):

Խաղող բառի ծագման վերաբերյալ ավելի համոզիչ կարելի համարել Վ. Գայսերյանի ստուգաբանությունը: Անդրադաշտնալի Վանի թագավորության արձանագրություններից մեկում *ha-lu-li-ni* վկայությանը, մերժելով Գ. Մելիքի-

զվիլու «թող կատարվեն», ապա և Ի. Դյակոնովի «հացկերույթ» (ծիսական) թարգմանությունը՝ գրում է. «*halisi* բառը, անկասկած որևէ կապ չունի առաջարկված թարգմանությունների հետ, այլ հայերեն «խաղող» բառի սեպագիր վկայված ձևն է՝ լ>ղ սովորական անցմամբ...: «Խաղող բառը մեր կարծիքով բարդ կազմություն ունի և բաղկացած է *hal* և *si* արմատներից, որոնցից առաջինը հայերեն խաղ «խաղալ, շարժվել, գնալ, վազել, արշավել» բառն է, իսկ երկրորդ բաղադրիչը՝ *si* «լինել, անել, տալ» բառը... Այսինքն՝ *խաղող* նախապես նշանակել է խաղ-/աց/ող, շարժվող, գնացող, սողալով աճող, որն անտարակույս խաղողի վազի բնորոշ հատկանիշն է» (ՊԲՀ, 2014, № 2, 163):

Նկատենք, որ *խաղ*-ի համար Գ. Չախուրկյանը ենթադրում է *h.-ե.* ծագում **kh1-* (կամ **khə1-*) **kel-* «քշել, արագ շարժվել» (ՋՀՄԲ, 311): Վերոհիշյալ փաստարկները կարելի է հիմնավոր համարել, որովհետև Հայաստանում վաղնջական շրջանից տարածում գտած պտուղը (միրգը) տրամաբանորեն պետք է ունենար բնիկ *h.-ե.* ծագում՝ հայերեն անվանում:

1. Խաղող բառի գործառական առանձնահատկությունները

Գրաբարում բառը հաճախական գործածություն չունի: Բառը չեն գործածել Կորյունը, Եզնիկը, Բուզանդը, Եղիշեն, Խորենացին:

Ագաթանգեղոսը և Փարպեցին վկայել են մեկ անգամ:

Ագաթանգեղոսի նախադասությունը հեղինակային չէ, այն քաղված է Աստվածաշնչից. հմմտ. «Զի յորթոյ Սողոմայ է որթ նոցա... խաղող նոցա լեղի և ողկոյզ նոցա դառնութիւն» (Բ. օրենք, ԼԲ, 32): «...Արբ Սողոմ զգինին անօրէնութեան... Զի

խաղող նոցա՝ էր խաղող դառնիճ, և ողկոյց նորա ի դառնութիւն լեղոյ...» (Ագաթ., § 538):

Փարպեցու գրքի օրինակը նույնպէս աստվածաշնչյան համատեքստում է՝ «Սուրբ Սահակ Պարթևի տեսիլը» բաժնում. «Եւ ի վերայ սեղանոյն կայր հաց մի սուրբ և ողկոյց մի խաղողոյ, ըստ պատուականութեան խորհրդոյ երկնաւոր փրկութեան» (Փարպ., 1982, 68)

Փարպեցին *տեսիլ*-ի նկարագրությունը սկսում է այսպէս. «Տեսիլ սրբոյն Սահակայ Պարթևի, գոր ետես ի Վաղարշապատ քաղաքի... Արդ՝ գրեցցուք տեսիլն, որ են՝ բանք Հոր եւ Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ և Հոգւոյն սրբոյ» (Փարպ., 1982, 66):

Հետհինգերորդարյան հեղինակներից *խաղող* բառը չեն վկայել Սեբեոսը, Ղևոնդը, Դրասխանակերտցին, Ասողիկը...:

Բառի առաջին վկայությունը Աստվածաշնչից է. կիրառված է 25 անգամ*:

Հունարեն Աստվածաշնչում բառը վկայված է 34 անգամ՝ 31-ը Հին կտակարանում, 3-ը՝ Նոր կտակարանում**:

Ռուսերեն համաբարբառում արձանագրված է 42 կիրառություն:

Բերենք մի քանի զուգահեռներ, որոնցում հայերեն *խաղող* բառը չկա:

«Կթեցին զայգիս իւրեանց» (Դատ., Թ, 27), ռուս. «собирали виноград»: «Եւ զամենայն պտուղ իւղոյ և զամենայն պտուղ գինւոյ և ցորենոյ, գոր տացեն Տեառն զպտուղ իւրեանց, քեզ ետու զայն» (թիւք, ԺԸ, 12), ռուս. «Все лучшее из еля, и все лучшее из винограда и хлеба, начатки их, которые

* Այս տվյալները համապատասխան համաբարբառներից են:

** Այս տեղեկությունը մեզ հաղորդել է հունագետ, բ.գ.դ. Գոհար Մուրադյանը, որին հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը:

дают Господу, я отдал тебе»: Աստվածաշնչային այս անհամապատասխանությունները վրիպումներ չեն կամ ոչ ճիշտ թարգմանություններ: Գրաբարում, թերևս նախագրային շրջանից մի շարք բառեր ունեցել են խաղող իմաստը. օրինակ՝ *որթ* բառի «խաղող» իմաստը ՆՀԲ և ԱԲ չեն նշում, իսկ ՀԱԲ-ը Գ. Մագիստրոսի «Ճաշէին յորթ, ի հաց և ի կոգի» նախադասության մեջ իրավացիորեն արձանագրում է «խաղող» իմաստը:

Սակավաթիվ են նաև *խաղող* բաղադրիչով կազմությունները: ՀԱԲ-ում նշված են հետևյալ բառերը *խաղողաբեր, խաղողադառն, խաղողենի, խաղողեփեաց* «մի տեսակ միջատ», *խաղողիկ, շնխաղող*. «մի տեսակ վայրի պտուղ»: Ն. Բյուզանդացին մերժում է *խաղողիկ* «մանր խաղող» իմաստը. «Խաղողիկ ոչ է զաղիերեն Blat ծաղիկն և ոչ մանր խաղող, այլ՝ *զանգիկ, լեզուակ*» (Բիւզ. Քննդ., 18):

V դարից են վկայված *խաղողաբեր* (վկայություն կա և X դարից), *խաղողադառն, խաղողեփեաց*: Մյուս բառերը ուշ շրջանի կամ միջինհայերենյան վկայություններ են*:

Նպատակահարմար ենք համարում այս շարքում անդրադառնալ և *չամիչ* «չորացած խաղող» բառին: (ՀԱԲ): ՆՀԲ-ի բացատրությունը ավելի մանրամասն է. «Խաղող չորացուցեալ յարևու կամ ի փռան. որպէս և ի բնէ կծկեալն

* Միջին հայերենի բառարանում *խաղող* արձանագրված չէ: Կա *խաղողենի*¹ «խաղող, որթատունկ», *խաղողենի*² «ծիածանաթաղանթ, ծիածան աչքի»: (304):

խաղող գործածական է համարյա բոլոր բարբառներում, մի շարք բարբառներում բառակրթի *խ*-ի փոխարեն *հ* է: Աճառյանի կարծիքով «շատ հետաքրքրական է Ղարաբաղի բարբառի *խըղվին* սեռականի հոլովածը» (ՀԱԲ): Հիշյալ բարբառի բառարանում որպէս գլխաբառ նշված են *խաղու(ղ)* |խաղոլ|հաղուլ|հաղոլ|:

Հավոյ: Կա և *խաղուն ծիծաղել* «Խաղողը հասունալ, հասունանալուց փայլել» դարձվածը: (ՂԲԲ, 260):

յետ կատարել հասունութեան. յորում մասին երևելի է մանրահատ խաղողն սեաւ և սպիտակ խաղողն անուշահոտ»: (ՆՀԲ, II, 562):

Աստվածաշնչում վկայված է 6 անգամ: Սուրբ գրքում է վկայված նաև *չամչեղէն* բառը. «Միրէին կտապս *չամչեղէն*» (Ովսե, Գ, 1), եբր.՝ *խաղողով* (տե՛ս ՆՀԲ, II, 562): ՀԱԲ-ում *չամիչ* բառը ստուգաբանված չէ: Գ. Ջահուկյանը գրում է. «Հայտնի չէ կապը հ.-ե. *kem «սեղմել, քամել» արմատի հետ, որից ծագում են հայ. *քամել* և լիտվ. *kėmuras*, լատվ. *cemu(o)rs* «խաղող» բառերը: (ՋՀՄԲ, 611)*:

Բնականաբար հարց է առաջանում. ինչո՞ւ գրաբարում, հավանաբար և նախագրային շրջանում, *խաղող* բառը հաճախական գործածություն չուներ:

Հիմնական պատճառն այն է, որ *խաղող* հասկացությունը արտահայտվել է մի շարք այլ բառերով:

Գրաբարում *խաղող* իմաստով է գործածվում նաև *գինի* բառը** : Հավանաբար *խաղող* իմաստն է արտահայտել և *այգի* բառը: Այն նախապես ունեցել է միայն «խաղողի այգի»

* «Գիրք Վաստակոց»-ի մի բաժին նվիրված է չամիչ պատրաստելուն. «Ա՛ռ գաղէկ խաղողն, սփռեա մինչև թառամի և ապա հան, կախեա ի շուքն մինչև անդ չորանայ... և աղէկ սեղմեա, որ տափականայ սերտ, և ի վերայ շաքրով ծածկեա, և յանծուխ պաղ տուն կախեա. և այս է լաւն և դիմացկոտն» (133):

** Այդ մասին տե՛ս սույն աշխատության II գլխում:

Գինի բաղադրիչով մի շարք բառեր առնչվում են «խաղող» հասկացությանը: *Գինակ* «խաղողի մի տեսակ», *գինուկ* «գինու խաղող», *գինեսուու որթ*: Այս բառերը ՆՀԲ-ում չկան: Օգտվել ենք Ստ. Մալխասյանի բառարանից: Այդ բառերին անդրադարձել է նաև պատմաբան Ս. Պետրոսյանը (տե՛ս ՊԲՀ, 199, № 2-3, 175): Բնարկե, եթե սրանք հին բնագրային վկայություններ ունենային, ավելի կարևոր փաստեր կլինեին, սակայն անվերապահորեն մերժելի չպետք է համարել դրանց գործածության վաղ ակունքները:

իմաստը: ՀԱԲ-ում *այգի*-ն դիտվում է որպես «խաղողային» հասկացություն. 1. «խաղողի այգի», 2. «խաղողի որթ»: «Արդի հայերէնի մեջ,- գրում է Հ. Աճառյանը,- արևմտեան գրականում *այգի* պահել է իր բուն նշանակութիւնը, իսկ արեւելեան գրականում նշանակում է ընդհանրապէս պարտէզ» (ՀԱԲ, I, 166):

Այլ տեսակի այգիները գրաբարում արտահայտվում են *բուրաստան*, *դրախտ*, *պարտէզ* բառերով:

Հ. Աճառյանը *այգի* բառի արմատը համարում է *այգ «խաղող», իսկ *ի*-ն ծառանուններին բնորոշ ածանց է: (ՀԱԲ, I, 166):

13-րդ դարից վկայված հետևյալ նախադասության մեջ *այգի*-ն հաստատապես նշանակում է «խաղող»: «Ի միում տեղոջէ ջամբէ բնութիւնն այգոյ քաղցրութիւն և լուծութիւն» (Իշօխ, 89): Բնագրի ռուսերէն թարգմանությունը՝ «Природа из общего источника даёт винограду сладость» (ն.տ.):

Ստ. Մալխասյանի բառարանում վկայված *այգեռուպ* «խաղողի հյութից պատրաստված դոշաբ, ռուպ» բառի *այգ(ի)* բաղադրիչը դարձյալ «խաղող» իմաստն ունի:

Կարելի է ենթադրել, որ թերևս նախագրաբարյան շրջանից *այգ(ի)*, *որթ*, *գին(ի)*, *խաղող* բառերը հումանշային եզրեր ունեին, բացառելի չէ որ դրանք կարող էին լինել տարածքային տարբերակներ:

2. Խաղողի վազի անվանումներ

Հայերենում ծառատեսակների անվանումները հիմնականում կազմվում են *մրգի (պտղի)* անուն է + *-ենի* կամ *-ի* ածանցով:

Գրաբարում *խաղողենի* վկայված չէ: ՆՀԲ-ի միակ վկայությունը միջինհայերենյան շրջանից է. «Տայ գեովութիւն

քափուրի, որ ի հնդիկս ի մեջ խաղողենոյ հանեն»: Այս նույն և միակ օրինակն է և «Միջին հայերենի բառարանում»: ՆՀԲ նշում է «որթ կամ այգի, յորում լինի խաղող» իմաստը, իսկ միջին հայերենի բառարանը՝ «խաղող, որթատունկ»: *Խաղողենի* չկա և բարբառներում (համենայնդեպս արձանագրված չէ «Հայոց լեզվի բարբառային բառարանում»:

Գրաբարում հաճախական է *որթ* «խաղողի վազ»-ը:

Որթ «տունկ խաղողոյ աճիւնաճիւղ» (ՆՀԲ, I, 694): ՀԱԲ-ը նույնպես նշում է այս իմաստը, նկատում, որ Գ. Մագիստրոսից քաղված «Ճաշէին յորթ, ի հաց և ի կոզի» նախադասության մեջ *որթ*-ը նաև նշանակում է «խաղող»:

Որթ (վազ) իմաստով է գործածվում և *այգի* բառը, որն առկա է գրաբարյան մի վկայության մեջ. «Որպէս զայգի երկմատնի կամ երեքմատնի» (ՆՀԲ): Բառարանագիրները «որպէս *զայգի*»-ից հետո փակագծերում նշում են (իմա՝ որթ): Նկատենք, որ *մատն*՝ որպէս խաղողային հասկացություն, ՆՀԲ-ն չի արձանագրում:

Հունարենում նույնպես ἄμπελος-ը ունի «խաղողի վազ» և «խաղող» իմաստները (Дворецкий, I, 99): *Որթ* բաղադրիչով են կազմված *որթատունկ*, *որթափայտ* բառերը:

Բառի հ.-ե. ծագումը կասկած չի հարուցում (տե՛ս ՀԱԲ, ՋՀՄԲ):

Վազ «խաղողի որթ» վկայված է Վ. Այգեկցու առակներից մեկում. «Եւ կտրեց զխաղողին վազն և կուծն լցեց գինով» (ՄՀԲ, 724): Բառի մեջ *վազել* բայի հիմքն է, ինչպէս *նստ*, *նստիւն* (ՀԱԲ, ՋՀՄԲ), իսկ վազ «ցատկ, վազ». «Թերևս հին իրանական փոխառություն է՝ vaz (հ.-ե. *vegh)» (ՋՀՄԲ, 701): *Վազ* «խաղողի որթ»-ը կարելի է համարել հայերենում ստեղծված բառ՝ հ.-ե. *vegh-ի անմիջական կապով:

Տոլի «խաղողի որթ» (ՀԱԲ, IV, 416): Բառը չունի ՆՀԲ-ն: Թեև վկայությունները միջինհայերենյան շրջանից են, սա-

կայն ուսումնասիրողները նշում են բառի կապը հին լեզուների հետ: Գ. Ղափանցյանը որպէս զուգահեռ նշում է ուտիերեն տև «խաղող», ինչպէս նաև ուրարտերեն սսուլի «գինի», սսլու «որթ» (Ղափանցյան, 2008, 50): Գ. Ջահուկյանը հնարավոր է համարում այդ առնչությունը (1987, 432), իսկ մեկ այլ տեղ գրում է. «Հազիվ թե կապ ունենա ուրարտ. սսուլի (սսլու) «խաղողի այգի» բառի հետ» (ՋՀՄԲ, 731): Ավելի վաղ հրատարակված այլ աշխատության մեջ հեղինակը նշում է *տոլի*-ի բնիկ հայերեն լինելը՝ հ.-ե. dhel-duol «ծաղկել, կանաչել» հին վ. գերմաներենի tela «խաղող, ողկույզ, վազ» (Джаукян, 1967, стр. 19): Ավելի համոզիչ է այս կապը. մանավանդ որ Գ. Ջահուկյանը *զինի*, *որթ*, *այգի*, *արգաստ* հնդեվրոպական ծագման փաստարկով եզրակացնում է. «Մրանք խոսում են խաղողագործության՝ վաղնջահայերին ծանոթ լինելու մասին» (Ջահուկյան, 1987, 263):

3. Խաղողի որթի (վազի) մասերի անվանումներ

Այս ենթախմբի անվանումները բազմաթիվ են:

Աղուրի/Աղուրայ «որթի տաշտաթաղ անելու ճիւղը» (ՀԱԲ, I, 135): ՆՀԲ-ում վկայությունները թարգմանական գրականությունից են: Բառը ստուգաբանված չէ:

Բառի վերաբերյալ ուշագրավ դիտարկում ունի Ս. Պետրոսյանը. «*Աղուրի*-ն արմատակիցն է *աղօղ/աղոշ* «խաղողի որթի նորածիլ ուղեշ» բառի: Մրանց արմատը ծագում է հ.-ե. *al «աճել, աճեցնել, սնել» նախաձևից: Աղուրի բառում արմատին հավելվել են *-ուր* (հմմտ. բլուր, հանուր...) և *-ի* վերջածանցները: Վերջինս նաև բուսանվանական վերջածանց է» (ՊԲՀ, 2010, № 3, 224): Հեղինակի կարծիքով բառն ունի նաև տեղանվանական կիրառություն, որը հայտնի է

սեպագիր տեքստերից: «Մ.թ.ա. 713 թ. Ուրարտու ներխուժած Ասորեստանի Սարգոն 2-րդ թագավորը Վանա լճի ավազանում հիշատակում է Alluria անունով գետ, իսկ ավելի հարավ... Alluria անունով լեռ» (ն.տ.): Հեղինակը ենթադրում է, որ հիշյալ գետը Վանա լճին հարող խաղողաշատ և գինեվետ գավառներից որևէ մեկում է եղել:

Արգաստ «որթատունկի էտած ճյուղերը»: Հայկազյան բառարանները այդ բառը չունեն: ՀԱԲ-ում ստուգաբանված չէ:

Ըստ Է. Աղայանի՝ բառը ծագում է հ.-ե. $\mu(e)rad$ - արմատի $\mu r\acute{o}d$ տարբերակից՝ *գրաստ>րգաստ>արգաստ* հաջորդական փոփոխություններով: Հ.-ե. արմատի իմաստն է «ճյուղ, արմատ, ոստ...» (Աղայան, 1974, 30): Գ. Զահուկյանը ընդունում է այդ ստուգաբանությունը (ՋՀՄԲ, 87):

Ս. Պետրոսյանը Ագուլիս (նախնական անվանումը՝ Արգուլիք) տեղանվան և Արգիշտի անվան մեջ տեսնում է *արգաստի*՝ *արգ* արմատը (ՇՀՀԿԳԱ, 2003, VI, 11):

Բագուկ - Գրաբարում բառը բազմիմաստ է: Նշանակում է նաև «ճյուղ»: Վկայված է Աստվածաշնչում. «... եւ ահա ձկտեն զբագուկ որթոյն ընդ արհամարհանս» (Եզեկ., Ը, 17): Աշխարհաբար թարգմանությունը. «... Ահա որթատունկի ճիւղն էլ *բաշում են որպէս արհամարհանքի նշան*»*:

Բագուկ «ձեռք, ձեռքի մաս» իրանական լեզուներից կատարված փոխառություն է: Հայերենում բառի «ճակնդեղ» և «ճյուղ» իմաստները չպետք է փոխառություն համարել:

Բարունակ «երկայնատարած ուռն որթոյ» (ՆՀԲ): Առաջին վկայությունը Աստվածաշնչից է. «... վասն այնորիկ մի՛ ծաղկեսցեն բարունակք նորա» (Յոբ, Ի, 21): Ըստ Հ. Աճառ-

* Ծանոթագրվում է, որ եբրայերեն բնագրում ընդգրկված հատվածը «քաշում են իրենց քթին» է: Ռուսերեն թարգմանության մեջ էլ այդպես է. «... они ветви подносят к носам своим»:

յանի «խաղողի պտղաբեր ոստ» (ՀԱԲ, I, 429): Մեծավաստակ գիտնականը, սակայն, առարկելի է համարում դասական գրաբարում *բար(բեր)* «պտուղ»+ունակ կազմությունը, «որը յետիններին է հատուկ» (ն.տ.):*

Գաւագան - Մի շարք իմաստներից զատ բառարանները արձանագրում են նաև «ծառի ճյուղ, ոստ» իմաստը: ՀԱԲ-ում նոր բառերի շարքում նշվում է Ղարաբաղի բարբառի *գաւագան* «որթատունկի մատ կամ վազ, որ նոր են տնկում» (I, 526): Բարբառային ձևը ոչ թե գավագան է, այլ՝ *կըրվագան*: Բարբառում գրաբարյան ձայնեղ բաղաձայնները իլանում են: Չայնեղների իլացման գործընթացը կատարվել է մինչև XII-XIII դարերը: Հետևաբար ենթադրելի է բառի գործածության հին ակունքները նաև հայերենում: Հավելենք, որ բարբառում *կըրվագան* բաղադրիչով կա նաև մեկ այլ բառ՝ *կըրվըզընափոս* «որթատունկի մատը կամ մատղաշ վազը տնկելու փոս» (ՂԲԲ, 378)**:

Գնդակ որթոյ «Բարունակ ոստ» (ՆՀԲ): «Կապեսցէ գորթոյ զյաւանակ իւր և զգնդակէն՝ զյաւանակ իշոյն» (Ծննդ., ԽԹ, 11): Ս. Գրքի այս հատվածը բերում է և Ագաթանգեղոսը. «Կապեսցէ զգրաստ իւր գորթոյ և զյաւանակ իշոյն գորթոյն գնդակէ» (Ագաթ., § 376): Աշխարհաբար թարգմանված են. «Իր

*Գ.Զահուկյանը կասկածելի է համարում Հ. Աճառյանի դիտարկումը (ՋՀՄԲ, 122):

** Բարբառային *թւննւց* «խաղողի որթ, վազ»-ը արդյոք կապ ո՞ւնի *թին* «խաղողի կորիզ»-ի հետ: Ս. Մալխասյանի բառարանում որպես զուգահեռ նշվում է պրսկ. *tane* «ծառի բուն»-ը: Հավանական է և միջին պարսկերենում *tak* «վազ, որթ»-ի հետ աղերսը: *Թւննւց* գործածվում է միայն Ղարաբաղի և Հավարիկի բարբառներում (ՀԼԲԲ, Բ, 76): Երկուսն էլ արևելյան խմբակցության բարբառներ են, որը ավելի հավանական է դարձնում իրանական լեզուներից փոխառյալ լինելը:

աւանակին կը կապի որթից, իսկ որթի ոստից էլ քուռակին» (Օննդ.): «Իր գրաստը որթատունկին է կապելու և իր իշու ձազը որթատունկի ծունկին» (Ագաթ., § 376):

Գնդակ որթոյ-ն, ըստ երևութին, որթի կլոր, ծնկաձև մասն է:

Գնդակ-ի և *գաւազան*-ի նշված իմաստները միջին իրանական լեզուներում վկայված չեն:

Խաւարածի «որթի փափուկ, կակուղ և մատղաշ ծիլ» (ՀԱԲ, II, 351):

Վկայություններ կան V դարի թարգմանական գրականությունից. ահա բնագրային մեկ օրինակ. «... զի ի մի անուն այգույ բազում իրք անուանաշատք յարինեալք պէսպէս կերպարանօք կանգնեցան՝ կացին՝ արմատք և ուռք, կողր և տերեւ խաւարծի և ծաղիկ և բաժակ, ողկոյզ, գնդակ, պատաղիճ» (Բրադ. վեց. 436): Գ. Չահուկյանը *խաւարծի*-ի, արմատը համարում է *խաւ* «շերտ, խավ» բնիկ հ.-ե. *khəu- *(s)keu- «ծածկել, փաթաթել» արմատից (ՉՀՄԲ, 323):

Կոյզկապ «կոթ խաղողոյ, որով յողկոյզն կախի»: «Խլեայ ի կոյզկապէն, այնպէս որ չպտղի պտուղն» (Վստկ., 83): Առաջին բաղադրիչը *ողկոյզի*-ի համառոտված ձևն է:

Մայրան - «միջին կամ հաստ բուն ծառոյ և որթոյ, իբր թէ մայր տնկոյն»: Այսպէս է ծանոթագրում «Գիրք Վաստակոց»-ի հրատարակիչը (էջ 252): ՆՀԲ-ի մեկնությունը մի քիչ այլ է: Բառի հ.-ե. բնույթը կասկած չի հարուցում:

Մատն «խաղողի որթի ճյուղերը» (ՀԱԲ): Գրաբարում հաճախական չէր: Բնիկ հայերեն բառ է:

Յօւ «յօտեալ ուռ՝ այսինքն ճիւղ որթոյ» (ՆՀԲ): Բառարանի վկայությունը V դարից է:

Տաշտ «խաղողի որթի տնկուած ճիւղ» (ՀԱԲ): *Տաշտ*-ը ունի «կոնք, բաժակ, խնկաման» իմաստները, այսինքն՝ տարբեր ամանեղենների անվանում է:

Տաշտ «խաղողի տնկած ճիւղ»-ի ծագումը անհայտ է (ՉՀՄԲ, 720): Թերևս ընդունելի է ՆՀԲ-ի բացատրությունը. «Որպէս բուն որթոյ տնկեալ ի կոնքաձև փոս (որոյ բացումն ասի բաժակել): Բառարանը բերում է Բուզանդի գրքից հետևյալ օրինակը. «Պատառէին բազում ունջս որթոյ, արմատաքի խլէին և գտաշտն գլխովին»:

Տաշտ-ով կազմություններից են՝ *տաշտաւոր*, *տաշտագեղ*, *տաշտաթաղ*, *տաշտախիլ*...:

V դարից են հետևյալ վկայությունները: «Պատառէին բազում ունջս որթոյ... արմատաքի խլէին և գտաշտն գլխովին և գրագուկ ընջովին» (Բուզ., 82): «Ձորացան ազագեցան բուրաստանք նոցա, և տաշտախիլ եղեն որթք զինքեր այգեաց նոցա» (Եղիշե, 201):

Տորր «շառաւիղ բուսոյ և տնկոյ».մանաւանդ «բազուկ որթոյ խաղողոյ» (ՆՀԲ): Գրաբարում հաճախական չէր: Գ. Չահուկյանը ենթադրում է որպէս *տարր* բառի ձայնդարձային տարբերակ՝ հ.-ե. *der- «քերթել, ճեղքել» արմատից (ՉՀՄԲ, 734):

Ուռ «Բարունակ որթոյ, ընձիւղ, ոստ որևէ տնկոյ» (ՆՀԲ): ՀԱԲ-ում «որթի ճյուղ» իմաստը չի նշվում: Իրավացիորեն ՆՀԲ բառիմաստների շարքում դնում է «բարունակ որթոյ»-ն: Աստվածաշնչի մի քանի վկայություններում էլ ուռ-ը «խաղողային» հասկացություն է: «...հատին անտի ուռ որթոյ, և ողկոյզ մի խաղողոյ ի նմա» (Թիւք ԺԳ, 24): Աշխարհաբար թարգմանությունը՝ «կտրեցին խաղողի ողկոյզ ունեցող որթատնկի մի ճիւղ», ռուս. «...срезали там виноградную ветвь с одною кистью ягод»: «Ես եմ որթ և դուք ուռ» (Յովհ., ԺԵ, 5): Աշխարհաբար թարգմանությունը. «Ես եմ

որթատունկը, իսկ դուք՝ ճիւղերը», ռուս.՝ «Я есмъ лоза, а вы- ветвы»* :

Ճիշտ է բառի՝ ՆՀԲ-ի բացատրությունը. «խիղբ որթոյ՝ որ պատի զխեչակով»:

Բառերի մի խումբ էլ վերաբերում է *ողկույզ* հասկացությանը:

Ողկույզ բաղադրիչով են կազմված՝ *ողկուզաբեր, ողկուզաբոյծ, ողկուզազարդ, ողկուզալի, ողկուզական, ողկուզաւորթ, ողկուզակ, ողկուզորէն* բառերը (ՆՀԲ, II, 507): Գ. Ջահուկյանը համարում է հին կազմությունն *ող* և *կուզ* տարրերից, որոնցից *կուզ*-ը համընկնում է *ընկոյզ* բառի *կոյզ*-ի հետ և պահպանվել է առանձին՝ *կուզ* «ճուր» բառի մեջ: *Ող*-բաղադրիչի համար Գ. Ջահուկյանը ենթադրում է հ.-ե. Ծագում: (ՋՀՄԲ, 600-601):

Ճիռ «խաղողի սակաւահատ փոքրիկ ողկույզ» (ՀԱԲ, III, 201): Բառի ծագումը անհայտ է: *Ճիռ* բաղադրիչով կազմություններից են *ճոսիսիտ, ճոսքաղ, ճոսքաղել, ճոսքաղու- թյուն*: Վկայությունների մեծ մասը V դարից են** :

Շրուանդ «հատերը թափված խաղողի ողկույզ»: Գրաբարում հաճախական չէր: Գ. Ղափանցյանը ճիշտ ձևը համարում է *շուանդ* կամ *շուանդ*, որի արմատն է *շիւ* (Ղափանցյան, 2008, էջ 37): Եթե ճիշտ է Ղափանցյանի ուղղումը, ուրեմն

* Ղարաբաղում կա *շալ* «խաղողի վազի շիվ». «մին շալ ա կըտըրում էտ կապուկը կապում» (ՂԲԲ, 564): Գ. Ջահուկյանը հնարավոր է համարում բառի հ.-ե. ծագումը (Ջահուկյան, 1970, 314): Նույն արմատի տարբերակն է և *շաղ* «մատղաշ ճյուղ»:

** Ղարաբաղի բարբառում կա քընթեռ(նը), կընթեռ(ն) «հատիկները թափած խաղողի ողկույզ, խաղողի ողկույզի մաս»: Իսկ *ճիթ* «խաղողի ողկույզ»: *Ճիթ* և *քընթեռ(նը)* բառերի հ.-ե. ծագումը կարելի է հավաստի համարել (Տե՛ս Ջահուկյան, 1972, էջ 304, 312):

բառն էլ պետք է համարել բնիկ հայերեն՝ հ.-ե. *skhi-ք «կտրել, անջատել» (ՋՀՄԲ, 588-589) արմատից:

4. Խաղողի մասերի անվանումներ

Կ. Գաբրիլյանը այս ենթախմբի մեջ ներառում է հետևյալ բառերը.

Կլայ=խաղողի հատապտուղ մը: Կեղեպ=վերնամաշկը: Միս=միջին մասը (purple): Կուտ=թիւնը: Ջուր=հիւթը (Գաբրիլեան, էջ 79):

Այս շարքին հավելենք՝ *կորիզ, շիւ, կեղեւ, թնահատ, փոճոկ, շիւ, չանչ*:

Թիւն-ի այլ ձևն է *թին*, որն առկա է *թնահատ* բառում:

Կլայ բառը արձանագրված չէ գրաբարի և միջին հայերենի բառարաններում: Հեղինակը երևի նկատի է ունեցել բարբառային-խոսակցական լեզվի *գոլլա* «խաղողի հատիկ», որը պարսկերենից կատարված փոխառություն է:

Բերենք օրինակներ *թիւն* և *թնահատ* բառերով. «Ձամենայն աւուրս ուխտին իւրոյ՝ յամենայնէ զինչ եւ լինիցի որթոյ... մինչեւ զթիւնն մի կերիցէ» (Թիւք, Զ, 4): «Եւ որթն, որ այնչափ գեղեցիկ է ի տեսանել և քաղցր ի ճաշակել, յանպիտան թնահատէ լինի» (Ոսկ. Պօղ, Բ, 446):

Նշենք, որ վերոնշյալ բառերից *թիւն, կեղեւ, կորիզ, կուտ*-ի համար ենթադրվում է հնդեվրոպական ծագում:

Շիւ-ը բազմիմաստ է, «ճյուղ» և «խաղողի կուտերն ու մնացորդը»:

Փոճոկ ըստ ՆՀԲ-ի՝ նաև *փեճեկ*: ՆՀԲ-ում որպէս խաղողի մաս չի շեշտվում: Ալիշանը հին բժշկարաններից բերում է մի վկայություն, որտեղ *փեճեկ*-ը խաղողի մաս է. «Խաղող լաւ է, զամենայն միրգ, երբ լինի հասուն ու քաղցր և

զանձն լաւ կերակրե. զկուտն ու զփեճեկն ձգէ. զի անհալ է» (Հայբուսակ, 231):

Չանչ «խաղողի ճգնված կեղևները» (ՀԱԲ, III, 623): ՆՀԲ-ում վկայված չէ: Հ. Աճառյանը Աստվածաշնչի «Զգինի ի չամչոյ մինչև ցթինն մի կերիցէ» (Թիւր, Զ, 4) նախադասության *չամչոյ*-ն համարում է ձեռագրական խաթարում: Համապատասխան նախադասությունը համեմատելով հուն. բնագրի հետ՝ իրավացիորեն ենթադրում է *չանչ* բառը: Նշենք որ այդ իմաստն ունի և ռուս. Աստվածաշունչը «... не должен он есть ничего, что делается из винограда, от зерен до коти»: Նկատենք, որ աշխարհաբար թարգմանության մեջ (Էջմիածին 1999) Աճառյանի ուղղումը հաշվի չի առնվել: *Չանչի* փոխարեն *չամիչ* է:

Բառը կովկասյան լեզուներից կատարված փոխառություն է (ՀԱԲ, III, էջ 623,624, ՋՀՄԲ, 611): Ստուգաբանական բառարանները նշում են վրացերենի *չենչո* «կեղև, կճեպ» համապատասխանակը:

5. Խաղողատեսակների անվանումներ

Ինչպես նշել ենք, գրաբարում *խաղող* բառը հաճախական գործածություն չունեք, բնականաբար հին մատենագրության մեջ էլ ըստ էության խաղողի տեսակների ու դրանց անվանումներին վերաբերող փաստեր չկան՝ բացառությամբ *ազոխ* «խակ խաղող» բառի: Այն վկայված է V դ. Թարգմանական գրականության մեջ:

Ըստ Աստվածաշնչի համաբարբառի տվյալների կա 4 վկայություն՝ Հին կտակարանից: Հետհինգերորդարյան ոչ թարգմանական գրականությունից ՆՀԲ բերում է և Գ. Մագիստոսի «Խակագոյն ազոխիցն անտիոցն» բառակապակցությունը:

Մի քանի տեսակների անվանումներ կան «Գիրք Վաստակոց»-ում. «Եւ ի նոսր գետինքն, ազգ մի սպիտակ խաղող կայ, որում Հոռոմն *Ստինաս* ասէ: Եւ այլ կայ որում փուրփուրնայ ասեն: Եւ այլ որում ճաւարս ասեն... և ի *ջրջրուկ* խաղողն ի նոսր և ի ցամաքային վայրսն տնկէ ոք...» (Վաստ., էջ 47: Ընդգծումները մերն են – Լ.Ն.):

ՆՀԲ-ն նշում է երկու անվանում բժշկարաններից. «*Յակոբուկ* կարմիր միրգ է, ի *շնխաղողին* ցեղեն» (ընդգծումը մերն է – Լ. Ն.): Հետաքրքրական է *Յակոբուկ* բառի բացատրությունը «որպէս թէ խաղող խաբող» (ՆՀԲ, II, էջ 315): Բառարանագիրները նկատի են ունեցել *Յակոբ* անձնանվան ստուգաբանական իմաստը: Ղ. Ալիշանը, խաղողի մի քանի տեսակների անվանումների մեջ տեսնում է նրանց «հայանուն» լինելը: Ահա այդ «հայանուն տեսակներէն» մի քանի անվանումներ. *ալեւորիկ, այծապտուկ, եզակն, ժոխոր, լկոխ, հայկանվազ, ճուաշ, պարտբաշխուց* կամ *պարտփախուց, տանեղ...* (Հայբուսակ, էջ 230-231):

Արդի խաղողատեսակների անվանումները, բնականաբար, ավելի շատ են. Կ. Մելիք-Շահնազարյանի գրքում կա կովկասյան խաղողների 90 անվանում: Նշում է խաղողի գույնը, հատիկների ձևը, կեղևը (կաշին) և գործածությունը՝ գինի պատրաստելու կամ սեղանի (ուտելու): (Շահնազարյան, 83-87): Բացառելի չէ այդ շարքի մեջ ընդգրկված մի քանի անվանումների ավելի վաղ շրջանում գործածությունը. *Աւբարի, գինակ, լրթենի, լկենի, խունկի, խնդողնը, մորի, սիսակ...*

* Արցախում *խնդողն/խընդողնը* սև և կլորավուն հատիկներով խաղողատեսակ է, նաև այդ խաղողատեսակից պատրաստված գինու անվանում: *Խինդ* արմատն է նաև *խընդեղնը* «սիւճ հոտ ունեցող թուփ՝ ողկուզաձև, մանր կլոր, սև պտուղներով» (ՂԲԲ, 276): *Խինդ* արմատով այլ բուսանուններ ևս կան: Գրաբարում վկայված է *խնդաւ-*

*
* *

Կարելի է առանձնացնել խաղողատեսակների անվանումների բառակազմական հետևյալ կառույցները.

ա) բուսանուններից կազմված բառեր՝ խունկի, մորի...

բ) կենդանանուններից կազմված՝ գառան դմակ, եզան աչք, իծապտուկ, իշենի, խոզակաշի, կատուենի...

գ) գունանուններից կազմված՝ լրթենի, կապուտկենի, կարմրենի...

Ակնհայտորեն շատ են ենի, ի ածանցներով կազմված բառերը: Նշված ածանցները դեռ հնագույն շրջանից ծառատեսակների անվանումների հիմնական բաղադրիչներ են, որոնք առկայանում են նաև մրգանունների մեջ:

Թեև մի շարք բառերի ստուգաբանական, բառակազմական յուրահատկություններ հիմք են տալիս ենթադրելու դրանց հինհայերենյան, գուցե և հնագույն հայերենի շրջանում կիրառության հնարավորությունը, սակայն վաղ շրջանում վերը նշված բառակազմական բոլոր կաղապարների գործուն լինելու կամ չլինելու հարցի մասին մատենագրա-

մոլի/մոլեխինդ: *Խինդ* արմատի հ.-ե. ծագումը հավաստի է (տե՛ս ՀԱԲ, ՋՀՄԲ): Այդ արմատի տարբերակն է՝ *խանձ*, որից՝ Ղարաբաղի բարբառում *խրնձաղա* «ձնձաղիկ»: Թերևս հայ. *խնձոր* բառում էլ նույն արմատն է:

Միսակ «խաղողի տեսակ»: Գրաբարի բառարաններում վկայված չէ: Մ. Պետրոսյանը ենթադրում է, որ *սիս* արմատը ունեցել է «խաղողի մատ» նախնական իմաստը և որ նույն արմատով կազմված սիսեռը կրել են իրենց դեռևս վայրի տեսակներ պտուղների նմանության՝ դրանց մանր գնդիկաձև լինելու պատճառով (ՊԲՀ, 2010, № 3, էջ 223): Մեկ այլ հոդվածում հեղինակը կոռեկ «խաղողի մի տեսակ», որը ՆՀԲ-ում վկայված չէ, առնչում է հ.-ե. *gor|ger «դարձնել, գալարել»-ի հետ (ՊԲՀ, 1999, № 2-3, էջ 176-177):

կան տվյալներ, ըստ էության, չկան: Հարցի պարզաբանմանը կարող են օգնել հին լեզուների ընձեռած փաստերը, եթե դրանք կան:

*
* *

Խաղող իմաստային դաշտի մեջ կարելի է ներառել խաղողի տեղավորման, պահպանմանը վերաբերող ներքո-հիշյալ բառերը. *գամբիւղ, կայթ, կեղթ, կթոց, կողով, որթ*, ոճ, սապատ, սփիւրիդ, տաշտ, տառաղան*: Բոլոր բառերը վկայված են գրաբար մատենագրության մեջ: Բնիկ հայերեն են *կթոց, ոճ, որթ**, հունարենից կատարված փոխառություններ են՝ *կեղթ, սփիւրիդ, տառաղան*, իրանական լեզուներից՝ *սապատ, տաշտ*՝ ասորերենից՝ *կողով*: ՀԱԲ-ում *ոճ*-ը ստուգաբանված չէ: Գ. Ջահուկյանի ստուգաբանությունը համոզիչ է՝ հ.-ե. *odigo- «ծղոտ, ցողուն» (ՋՀՄԲ, 602): Բառը վկայված է Աստվածաշնչում. «Կթեցէք, կթեցէք, ճոքաղ արարէք... Եւ անդրէն կրկնեսցիք որպէս կթոյ յոճ իւր» (Երեմ., Զ, 9):

* Մ. Խորենացին *որթ* տեղանվան հետ է կապում *որթ* «կողով»-ը: Ներսեսը երեխաներին Արշակավանի կոտորածներից փրկելով՝ հրամայում է. «կրել որթովք ի գոմ մի... և դարմանս և սնուցողս նոցին կարգեաց, որք յետոյ աւանացեալ անուանեցան Որթք այնորիկ աղագաւ» (Խոր., III, ԻԷ): Մտ. Մնլխայանը մի ուշագրավ ծանոթագրություն ունի. «... հունարենում «αγγος» բառը, որ ընդհանրապես նշանակում է քթոց, ունի նաև մի հատուկ նշանակություն՝ զամբյուղ, որի մեջ դնում էին ընկեցիկ երեխաներին» (Խոր., 1981, ծան. 280, էջ 516):

ԳԼՈՒԽ II ԳԻՆԵԳՈՐՄՈՒԹՅՈՒՆ

1. Գինի բառի ծագման հարցը. գինի հասկացության այլ անվանումներ

Հայերենը լինելով հ.-ե. լեզուներից մեկը, բնականաբար պետք է ունենար այդ խմիչքի բնիկ հայերեն՝ (իմա՝ հնդեվրոպական) անվանում: Այս, ինչպես նաև գինեգործության հայրենիքի հարցում մասնագիտական գրականության մեջ կան որոշ տարակարծություններ, մանավանդ որ սեմական և կովկասյան որոշ լեզուներում էլ նույն արմատն է:

Հ. Աճառյանը ընդունում է բառի հ.-ե. ծագումը՝ ենթադրելով նախնական *qēnh* ձևը՝ հ.-ե. *voinio*-ից: Նա, սակայն, անվերապահորեն ընդունում է իր ուսուցչի՝ Ա. Մեյեի տեսակետը՝ գրելով. «... Գինին Միջերկրականի հին քաղաքակիրթ ժողովրդի գիտն ու սեփականությունն է, որ յետոյ մի կողմից՝ փոխառութեամբ անցաւ սեմականներին և միւս կողմից՝ հարևան հնդեվրոպացիներին» (ՀԱԲ, I, 558):

Ականավոր լեզվաբան Վ. Գեորգիևը, հիմք ընդունելով այն, որ հուն. «*qēnh*» և «խաղողի վազ» հասկացությունները նույն հ.-ե. արմատից են, գտնում է, որ *qēnh*-ն ունի հ.-ե. ծագում, նկատում նաև, որ մերժողները կրում են Ա. Մեյեի այն տեսության ազդեցությունը, ըստ որի՝ նախահունական բնակչությունը եղել է ոչ հնդեվրոպական: Գեորգիևը մերժում է Մեյեի տեսությունը՝ համարելով այն անստույգ, ոչ ճշմարիտ փաստերի վրա հիմնված: Գինի բառի համար Գեորգիևը առաջարկում է նախնական **uei-* արմատը՝ նշում նաև, որ հայ. գինին հ.-ե. **uoinio*-ի ժառանգությունն է հիմք լեզվից, իսկ վրացերեն *γwino*-ն փոխառություն է հայերենից կամ հ.-ե. որևէ այլ լեզվից և ոչ թե հակառակը: (B. Георгиев, 1958, 265-

266): Գ. Ջահուկյանը նույնպես ընդունում է *qēnh*-ի հ.-ե. ծագումը՝ համամիտ լինելով Գեորգիևի հետ (Ջահուկյան, 1987, 155):

Qēnh բառի հ.-ե. ծագումը փաստարկվում է նաև Գամկրելիձեի և Վ. Իվանովի հանրահայտ աշխատության մեջ: Նշվում է, Անդրկովկասում (Հայաստանը չի շեշտվում – Լ.Հ.) մ.թ.ա. V-IV հազարամյակում խաղողագործության մշակույթի գոյության մասին: (Гамкредидзе, Иванов, 650-651): Հեղինակների կարծիքով՝ **uei-|*ui* «հյուսել, ոլորել» և այդ արմատի ածանցմամբ հ.-ե. **uoinio*-**uoino*- «գինի» կապը հաստատվում է հ.-ե. (և ոչ միայն) մի շարք լեզուներում նույն արմատով «խաղող», «խաղողի վազ», «որթ» և «գինի» բառերի գոյությամբ:

Վաղնջահայերենում էլ թերևս *qēnh*-ն ունեցել է և *խաղող*, *խաղողի գինի* իմաստները՝:

Գրաբարի բառարանները *qēnh* «խաղող» կամ «խաղողի վազ» իմաստը չունեն, սակայն մատենագրության որոշ օրինակներից կարելի է ընդունել, որ այդպիսի գործածություն եղել է:

ա) *Qēnh* բառը ՆՀԲ մեկնում է. «Բեր որթոյ կամ այգւոյ արիւն խաղողոյ. քաղցու...»: Ուշադրության արժանի է «*Բեր որթոյ կամ այգւոյ*» բացատրությունը, որից տրամաբանորեն ենթադրելի է՝ այգու կամ վազի բերքը գինին չէ, այլ՝ խաղողը:

* Վաղնջահայերենում *qēnh* բառի մեջ *-h* ածանցի առկայությունը ընդունում է Գ. Ջահուկյանը (Ջահուկյան, 1987, 231): *Qēnh* արմատի գոյության մասին ակնարկում է նաև Մ. Խորենացին՝ *Qēnh* հատուկ անվան «ստուգաբանության» շրջանակներում. «... քանզի պատրաստէր զըմպելիսն արքայի յընտիր և ի համեղ գինեաց, ունէր և կոչումն անուան գին» (Բ, 111): Խորենացու նշված ստուգաբանության մասին տե՛ս Գ. Մարգարյան, 2006, 93:

բ) V դ. մատենագրության մեջ վկայված հետևյալ օրինակներում *գինի* դարձյալ վերաբերում է *խաղող* հասկացությանը. «Եւ զամենայն արեւելեան եւ զհիւսիսային եւ զհարաւային կողմանս քաղաքին զարդարէ դաստակերտօք, եւ սաղարթիւք ծառոց վարսաւորաց, զանազանեալք ի պտուղս եւ ի տերեւս եւ բազում բազմաբերս եւ զինքերս ի նմատնկեաց ովիտ» (Խոր., I, ԺԶ):

Գինեքեր բառը վստահորեն կարելի է փոխարինել *խաղողաբեր* բառով. այդ է հուշում նաև *զանազանեալ ի պտուղս* կապակցությունը: Այլ օրինակ՝ «Չորացան ազագեցան բուրաստանք. ծաղկոցաց նոցա. եւ տաշտախիլ եղեն որթք զինքեր այգեաց նոցա» (Եղիշէ, 201): Մի խոսքով, ամենայն հավանականությամբ վաղնջահայերենում, ինչպես շատ լեզուներում *գին(ի)* արմատով արտահայտվել են նաև «խաղող», «խաղողի վազ» հասկացությունները:

Գինի հասկացությունը գրաբարում արտահայտվում է նաև *արին խաղողոյ* բառակապակցությամբ: ՆՀԲ-ի բոլոր վկայությունները V դարից են, մեկ օրինակ՝ Նարեկացուց: Բառակապակցությունը հաճախական է Հին կտակարանում. բերենք երկու օրինակ. «Լուսացէ զինուով զպատմուճան իւր, և արեամբ խաղողոյ զհանդերձս իւր» (Ծննդ, ԽԹ, 11): «Եւ զարին խաղողոյ ըմպէին զինի» (Բ. օր, ԼԲ, 14): Նկատելի է, որ *արին խաղողոյ* բառակապակցությունը հիմնականում հանդես է գալիս *գինի* բառի հետ՝ կարծես թե մեկնելով կապակցության իմաստը: (Այդ բառակապակցության եբր., հուն. և լատ. համապատասխանակները տե՛ս «Էջմիածին», Ժ, 2016, 131):

Բերենք ռուսերեն զուգահեռները. «Моет в вине одежду свою и в крови гроздей одеяние свое» (Ծննդ, ԽԹ, 11). «И ты пил вино, кровь виноградных ягод»:

Արին խաղողոյ-ն վկայել է նաև Եղիշէն: «Մեկնութիւն արարածոց» աշխատության մեջ. «Եւ կէսք՝ զխաղողն եւ զարին խաղողոյն, զոր Տէրն կենաց գրաւական ետ ածեն զվկայս» (ՄՀ, Ա հատ., Ե դար, 789):

Նոր կտակարանում զինին այլաբերաբար նաև Քրիստոսի արյունն է. «Եւ առեալ բաժակ գոհացաւ, ետ նոցա և ասէ, Արբէք... զի այդ է արին իմ նորոյ ուխտի» (Մտթ., ԻԶ, 27): Կրոնական խորհրդանիշի արտահայտություն է *Աստուածըմպելի* «զինի» բառը. «Սփռեալ եհեղ ի վայելչութիւն օգտակարագոյն աստուածըմպելոյն» (ՆՀԲ, I, 332):

Դեռ վաղնջական շրջանից զինին առնչվել է նաև ծիսական արարողությունների հետ: Պատահական չէ, որ զինու արտադրությունը հիմնականում կատարվել է տաճարներում: Հայաստանում խոշոր հնձաններ հայտնաբերվել են եկեղեցիներում ու վանական համալիրներում: Իսկ եկեղեցիների պատերին խաղողի, զինու քանդակները քրիստոնեական ուսմունքի հետ կապված նոր խորհրդանիշներ են (Հարությունյան, Քալանթարյան, ... 32)*:

* Նախաքրիստոնեական շրջանում, որոշ ժողովուրդների մոտ հատուկ պատրաստված ու պահպանված զինի խմելը պատերազմում հաղթելու, թշնամուն սպանելու խորհրդանիշ էր: Օրինակ՝ Սկյութներից այդ զինուց իրավունք ունեին խմել միայն նրանք, որոնք թշնամու զինվոր էին սպանել: Իսկ դաշինք հաստատելիս որպես երդման արարողություն, բաժակի մեջ լցված զինուն խառնում էին դաշինքի մասնակիցների արյունը, զենքը բաժակի մեջ թաթախելուց հետո խմում (Հերոդոտոս IV, 242-244):

Գինու պաշտամունքը և տարբեր առիթներով զինու «նվիրատվությունը» բնորոշ էր հին հնդեվրոպական ժողովուրդներին: Իսկ խեթերը զոհաբերվող կենդանու վրա զինի էին թափում: (Գամկրելիզե, Իվանով, 652):

2. *Գինի* բառի գործածության հաճախականությունը, բառակազմական յուրահատկությունները

Գինի բառը հաճախական գործածություն ունի դեռևս V դարից: Կարելի է վստահորեն ասել, որ այն վկայված է ինչպես ինքնուրույն, այնպես էլ թարգմանական գրականության մեջ: Աստվածաշնչում բառը վկայված է 218 անգամ, Եզնիկի «Եղծ աղանդոցում»՝ 6, Ագաթանգեղոսի, Բուզանդի, Փարպեցու, Խորենացու «Պատմություններում» համապատասխանաբար 14, 19, 6 անգամ*:

Գինի բառով կան բազմաթիվ կազմություններ. ՆՀԲ-ում վկայված են հետևյալ բառերը գինածաղիկ (նաև գինեծաղիկ), գինավաճառու, գինարբու, գինարբութիւն, գինարբումն, գինաւէտ (նաև՝ գինեւէտ), գինեակ, գինեբեր, գինեբուղիս, գինեգոյն, գինեգանցութիւն, գինեզէն, գինեզինիւմ, գինեզինութիւն, գինելից, գինեխագութիւն, գինեխամեալ, գինեխում, գինեծաղիկ, գինեկարաս, գինեկեզ, գինեկիզութիւն, գինեհամ, գինեհան, գինեհատ, գինեհատութիւն, գինեհար, գինեհարիւմ, գինեհարութիւն, գինեճանութիւն, գինեմ, գինեման, գինեմոլ, գինեմրուր, գինենամ, գինեպաշտ լինել, գինեպաշտութիւն, գինեպետ, գինեսէր, գինեվաճառ, գինետեսակ, գինետեսիլ, գիներբուք, գինեւէտ, գինըմպելի, գինըմպու, գինըմպութիւն...

ԱԲ-ն հավելում է *գինեստու*, *գինեհոտ*: Գրաբարի բառարանները չունեն *գինեձաւնութիւն* «որևէ բանի հիշատակին գինի նվիրելը»: Բառը վկայված է թարգմանական գրականության մեջ. «Իսկ տրամաբանականս այսպէս ասէ՝ եթէ

* Տվյալները՝ ըստ նշված գործերի համաբարբառի: Հաշվարկներում կարող են լինել չնչին բացթողումներ:

անմահ է հոգին, վասն զի իւրովք ամենայն մարդ գինեձաւնութիւնս առնէ գնացելոցն» (Դ. Անյաղթ., Ստորոգ, 204):

Գինի բաղադրիչով բազմաթիվ բառեր կան նաև Ստ. Մալխասյանի բառարանում: Գրաբարում դրանցից մի քանիսի գործածությունը մեր կարծիքով, հավանական կարելի է համարել: Ինչպէս՝ *գինաստեաց*, *գինեգործ*, *գինեկան* «գինուն հատուկ», *գինեմոլութիւն*, *գինեմրրական*, *գինեչափ*, *գինոտ*, *գինուկ* «գինու խաղող»:

Գինի բաղադրիչով կազմված են մի շարք հատուկ անուններ: (ՀՀՇՏԲ-ում արձանագրված է քառասուն տեղանուն):

ա) Վանքերի անվանումներ. *Գինեբերդ կամ Գինեբերդի վանք*, *Գինեկանից Ս. Աստվածածին*, *Գինեբեր Ս. նշան*, *Գինեբերի վանք*:

բ) Բնակավայրեր. *Գինեթաղք*, *Գինեկ*, *Գինկանց*, *Գինեկէ*, *Գինեփոս* (գյուղերի անվանումներ են): *Գինի*՝ Արևմտյան Հայաստանի գավառակներից մեկի անվանումն է:

գ) Գետանուններ. *Գինեգոյն*, *Գինի*, *Գինեկան* (տե՛ս ՀՀՇՏԲ, I, 864-866):

դ) Անձնանուններ. *Գինեվարդ/Գինեվարդ*, *Գիներբուկ*, *Գինէ*, *Գինով*, *Գնէլ* (տե՛ս Անձ. Բառ.): Հ. Աճառյանը մերժում է *Գնէլ* անձնանվան կապը *գինի* բառի հետ «որովհետև այդ դեպքում պիտի լիներ Գինէլ (Անձ. Բառ., հ. I, 477): Կարծում ենք ի<(ը) հնչյունափոխությունը (կամ ի-ի տղումը) մերժելի չէ: Նաև հնարավոր է այդ անձնանվան *Գին* «գինի կամ խաղող» արմատի առկայությունը: Պետք է ընդունել նաև *Գնունի* տոհմանվան մեջ *գին(ի)* բառը, որը նկատել է դեռևս Ս. Խորենացին:

Բառարանից քաղված անվանումների ժամանակագրության հարցը անորոշ է. Այսինքն՝ պարզ չէ դրանք հին թե՛ նոր անվանումներ են: Դա հնարավոր է պարզել միայն

մատենագրական տվյալներից: Խորենացին վկայել է *Գինա* գետանունը «Անցեալ զկամրջան Արտաշատ քաղաքի որսալ կինճս և իշավայրիս զակամբ Գինայ» (Խոր., II, ԿԱ): Թ. Արծրունին հիշատակում է մեկ այլ տեղանուն. «...քանակ արքային... սփռեալ առ լերամբն Գինոյ կոչեցեալ բլեր...» (ՄՀ, հ. ԺԱ, 293):

Ուրեմն՝ *Գինա* տեղանունը V դ. արդեն կար, իսկ *Գինոյ* բլուրը X դ. (Արծրունին X դ. հեղինակ է): Ամենայն հավանականությամբ այդ անվանումները եղել են ավելի վաղ շրջանում:

«Գիտեմ և զԳնունիսդ գինի ունիս, որ զարժանի թագաւորին պատրաստէր զըմպելիսն, որ սքանչելի իմն դիպեալ եղև ըստ գործոյն և անունն. քանզի պատրաստէր զըմպելիսն արքայի յընտիր և ի համեղ գինեաց, ուներ և կոչումն անուանն Գին» (Խոր., II, Է): Գուցե և առարկելի «Գինի ունի(ս)» ժողովրդական ստուգաբանությունը, բայց տոհմանվան կապը «գինի» բառի հետ պետք է ընդունելի համարել: Գ. Սարգսյանը, ըստ էության, չմերժելով *Գնունի* տոհմանվան առաջին բաղադրիչ *գին* կամ *գինի*-ի առկայությունը, այդ արմատն է տեսնում և *Գնէլ* անձնանվան մեջ. «Գնունի տոհմանվան կապակցությամբ հիշատակելի է և «Գնէլ» անձնանունը: Թեև Խորենացին այն անմիջապես մասնակից չի դարձնում տոհմանվան ստուգաբանությանը, բայց և այնպես նրա մոտ այդ անվան երեք կրողներն էլ առնչվում են այդ տոհմին, ըստ որում դրանցից մեկը հանդես է գալիս որպես արքունի տակառապետ» (Գ. Սարգսյան, 2006, 94): *Գնունի* տոհմանվան վերաբերյալ մի դիտարկում ունի և Ս. Պետրոսյանը. «Գնունի նախարարական տոհմի համատեղած մատովակ և հազարապետի պաշտոնների երբեմնի սերտ կապի տեսանկյունից ուշագրավ է այն հանգամանքը, որ ո՛չ միայն *Գնունի* տոհմի անունն ունի իր «խաղողա-գինիական»

զուգահեռները, այլև նրա զբաղեցրած հազարապետի պաշտոնի անունը»: Հազարապետ-հազար-ապետ, որտեղ *հազար*-ը «1000» չի նշանակում (Գնունիները հազարյակի պետեր չէին, այլ մատովակներ և երկրի գլխավոր տնտեսներ): Հմմտ. *հազարի* | <(հազար-ի «խաղողի մի տեսակ,... գինու խաղող»): (ՊԲՀ, 1999, 177):

Մի խոսքով՝ *Գնունի* տոհմանվան մեջ «գինի» բաղադրիչը մերժելի չէ:

3. Գինու տեսակների անվանումներ

Հնում ոգելից խմիչքներից ամենատարածվածը գինին էր:

Մեր մատենագրության մեջ որոշ տվյալներ կան նաև գինու տեսակների մասին: Այդ առումով հինգերորդարյան գրականության մեջ առանձնանում է Աստվածաշունչը, որտեղ նշվում են *հավելումներով*, *թունդ*, *նոր* և այլ տարատեսակներ:

«Էջմիածին» ամսագրում հրապարակված բարձրարժեք գիտական հոդվածի հեղինակները մանրամասն անդրադարձել են Աստվածաշունչյան բոլոր վկայություններին՝ նշելով հաճախականությունը, երբայերեն, հունարեն, լատիներեն համապատասխանակները* : Ուստի մենք Աստվածաշունչի բո-

* Տե՛ս Բ.Գասպարյան, Հ.Ավետիսյան, Ա.Գնունի, Ա.Բոքոխյան, *Ոգելից խմիչքների հիշատակությունները Աստվածաշունչի հայերեն թարգմանության մեջ և դրանց պատմամշակութային համատեքստը*, «Էջմիածին»: Հոկտեմբեր, 2016, էջ 119-133:

Հայկական գինու մասին տեղեկություններ կան օտար պատմագիրների գործերում:

Ստրաբոնը Մելիտիների գինին մրցակից է համարում հունական մոնոքիտ կոչված գինիներին (Աճ., Ստրաբ., էջ 70): Ստրաբոնը նաև գրում

լոր վկայություններին չենք անդրադառնա, կրեքենք միայն մի քանի օրինակներ՝ ՆՀԲ-ի բացատրությունների առումով:

Բնականաբար, որակյալ համարվող գինու տեսակները մատչելի էին բարձր խավի ներկայացուցիչներին:

Արքունի, թագավորական գինի. «Ձոր արքունի գինին ըմպեն» (ՆՀԲ): «Եւ կարգեաց նոցա թագաւորն ռոճիկս օր ըստ օրէ ի սեղանոյ արքայի, եւ ի գինոյ գոր ինքն ըմպէր, սնուցանել զնոսա ամս երիս» (Դան., Ա, 5):

Ըստ ՆՀԲ-ի՝ «արքունի գինի. իբր ազնիւ գինի, որ ասի և թասուն, այսինքն Թասոս կղզոյ»: «Դու զթասուն գինի ըմպէս, նմա և ոչ բաժակ մի ցուրտ ջրոյ տաս ի ծարաւ» (Ոսկ., Մտթ., Բ, 693):

Անապակ գինի «անջուր գինի, անխառն» (ՆՀԲ). «Առ զբաժակ գինոյս անապակի այտրիկ» (ՆՀԲ):

Անուշ գինի վկայել է Ագաթանգեղոսը, իսկ 7-րդ դարի պատմիչ Հովհան Մամիկոնյանը նշում է նաև այդ կարգի գինու արտադրության վայրը. «Բայց զանոյշ գինին Ասորոց եւ *Մալնայ և Մորխայ* այս երկու տարի է, որ յինէն կտրեալ էին և ինքեանք արբին» (ՄՀ, հտ. Ե., 1093): Մալանը և Մորխը Արևմտյան Հայաստանի բնակավայրերից են:

Անուշ բաղադրիչով գրաբարում վկայված են *անուշահամ, անուշահոտ գինի*, որոնք նույնպես որակյալ գինիներ են համարվում:

«Գիրք Վաստակոց»-ում մի շարք տեղեկություններ կան գինու տեսակների վերաբերյալ. «Սև խաղողին գինին ուժով և թանձր լինի. սպիտակ խաղողին գինին միջակ է յուժոյն և վատոյժ և նօսը և սուր. կարմիր խաղողին գինին պարարտ է քան զսևին և խիստ արբեցուցանէ: Նոր տնկին գինին բնութեամբ այլ հով է, քան զհին այգւոյն, զի հին

է, որ «Հայաստանում կան շատ լեռներ և շատ լեռնադաշտեր, որոնց մեջ խաղողի այգին հեշտությամբ չի աճում» (ն.տ., էջ 55):

այգւոյն գինին բնութեամբ տաք է բնական զիջութեամբ» (Վասկ., 84):

Ահա մի հատված էլ, որտեղ ուշագրավ է հատկապես վերջին նախադասությունը՝ որպես միջնադարյան սնտիպաշտության արտահայտություն. «Եւ գիտելի է, որ երաշտ տարւոյն գինին պինտ և ուժով լինի. և պարտ է որ առնուս անձրևաջուր, և եփես այնչափ, որ մնա կէսն և գինին խառնես և սակաւ զըմուռս, նա խիստ լաւացուցանէ զգինի...: *Եւ պարտ է, որ ամենեւին անպատեհացեալ կին ի մառանն չմտանէ, թե ոչ՝ աւերի այն գինին, որ այն կնոջ հոտն ի յինքն դիպի և որպէս զջուր դառնայ*» (Վասկ., 93: Ընդգծումը մերն է – Լ.Հ.)^{*}:

Ծաղկահամ գինի – ՆՀԲ ունի միայն մեկ վկայություն: Առաքել Դավրիժեցու գրքում նույնպես նշվում է որպես ընտիր գինի. «Պատուեցին զնա համադամ կերակրօք և ծաղկեհամ գինեաւ» (Դվրժ, 25): ՆՀԲ վկայում է նաև *ծաղկահոտ գինի*^{**}:

^{*} «Գիրք Վաստակոց»-ում բազմաթիվ միջոցներ են առաջարկում գինու որակը, համը, հոտը բարելավելու վերաբերյալ: Բերենք միայն այդ հարցերին վերաբերող բաժինների մի քանի վերնագրեր: «Վասն գինոյ որ անուշահոտ առնես»: «Վասն այլ ազգ անուշահոտ առնելոյն զգինին»: «Վասն որ զպինդ գինին անուշահամ առնես»: «Այլ վասն անուշացուցանելոյ զգինին»: «Վասն որ զնոր գինին շինես, որ զերդ հին գինի լինի»: «Վասն դեղոց գոր առնես, որ նոր գինին զերդ հին դառնայ անոյշ հոտով և համով»: «Վասն որ զմէկ տարւոյ գինին զերդ ԺԵ տարւոյ շինես»: «Վասն որ զվատոյժ գինին ուժտար առնես»: «Վասն որ զպինտ գինին կակղացուցանես» «Վասն գինոյ, ...որ զոյժն և զառողջութիւնն պահէ զմարդոյն և չտայ ի ծերութեանն վատուժել» (էջ 105-118):

^{**} Որակյալ բարձրորակ գինի ունենալու համար անհրաժեշտ են մի շարք պայմաններ՝ հողի տեսակը, այգեկութի ճիշտ ժամանակի ընտրությունը, եղանակը: Խոնավ ու անձրևային օրը ոչ միայն դժվարացնում է քաղի աշխատանքը, այլև ազդում է գինու որակի վրա: «Խաղողի քաղը պետք է սկսել արևածագից հետո, երբ առաւօտուայ

Անուշահամ գինու տեսակ է և *քաղցու*-ն. Առաջին վկայությունը Աստվածաշնչից է. «Եւ որովայն իմ իբրեւ գտիկ քաղցուոյ կապեալ եռայ» (Յոբ, ԼԲ, 19): *Քաղցուի* հունանիշներ են *խազմուզ* և միջինհայերենյան շրջանից ավանդված *մուստառ* բառերը: Վերջինս պարսկերենից կատարված փոխառություն է (ՀԱԲ, III, 361): *Խազմուզ*-ը ՀԱԲ-ում ստուգաբանված չէ: Գ. Ջահուկյանը ենթադրում է, որ բառը կազմված է *խազ* «խակ» մուզ (մզել բայի արմատը) բաղադրիչներից (ՋՀՄԲ, 308):

Մեծավաստակ գիտնականի այս ենթադրությունը կասկածելի է, քանի որ քաղցուն խակ խաղողից չեն պատրաստում:

Քաղցու-ն հ.-ե. *dik-s-ku «քաղցր»-ի ծագումը կասկած չի կատարում (տե՛ս ՋՀՄԲ, *քաղցր* բառահոդվածը):

Որակյալ է համարվում և *պարզ* կամ *պարզեալ* գինին: «Կանայք... նախարարացն և կանայք աւագաց... փոխանակ պարզ գինոյ ջուր չափով ըմպելին» (Փարպ., ԿԱ):

Պայմանականորեն գինու տեսականու մեջ կարելի է ներառել և *քացախ*-ը: ՆՀԲ-ում նույնպես այն համարվում է ոգելից խմիչք. «Կծու և բարկ ըմպելի՝ ի թթուութենէ գինոյ և այլոց հիւթոց կազմեալ. համեմիչ, զովացուցիչ, զորացուցիչ»:

ցողը անցել է և դադրեցնել երեկոյան զովը ընկնելուց առաջ» (Մելիք-Շահնազարեան, 110): Հեղինակը խորհուրդ է տալիս, որ նույնքան բծախնդիր պիտի լինել քաղցուի պատրաստման ժամանակ: «Ամէն այգետէր իւր շիրատունը գետնի մակերեւոյթից ցած պիտի չջինէ... օրը մի երկու անգամ շիրատան օղը պիտի փոխել... շիրատուն մտնելուց առաջ. առջևից ցած բռնած վառ ճրագ տանել, եթէ ճրագը հանգաւ, պիտի առաջ չգնալ, մինչև որ ներսի օղը դուրս չանունին... Գաղղիայում տարի չէ անցնել, որ տաքարի մէջ մի քանի տասնեակ մարդիկ չխեղդուին իրենց անզգուշութիւնից» (էջ 22):

Ըստ երևութին, *քացախ*-ը տարբեր չափաբաժիններով և այլ նյութերի խառնուրդով նաև օգտագործելի էր որպես դեղ. օրինակ (*Քացախաթան* բառը ըստ ՆՀԲ-ի նշանակում է «Օշարակ բժշկական ի մեղրէ և ի քացախէ՝ խառն ընդ աղի և ջրոյ»): *Քացախ* բառով կան մի շարք կազմություններ. *Քացախագոյն*, *քացախեմ*, *քացախութիւն*, *քացախուտ* (ՆՀԲ, II):

Ստուգաբանական բառարաններում *քացախ*-ը ստուգաբանված չէ:

*
* *
*

Թեև հին մատենագրության մեջ տեղեկություն չկա գինու գունային առանձնահատկության մասին, սակայն ենթադրելի է, որ սկզբնապես եղել է կարմիր գինին (բնականաբար և խաղողի այն տեսակը, որից ստացված է այդ խմիչքը): (Տե՛ս Գամկրելիձե, Իվանով, II, 647):

4. Խմիչքի այլ տեսակների անվանումներ

ա) Օղի, ցքի

Ոգելից խմիչքներից գրաբարում ավանդված են նաև *օղի* և *ցքի* բառերը:

Օղի բառը գրաբարում հաճախական չէր: Ըստ Աստվածաշնչի համաբարբառի՝ վկայված է մեկ անգամ. «Ձի եղիցի մեծ առաջի Տեառն, եւ գինի եւ օղի մի արբցէ» (Ղուկ., Ա, 15): Բառը, սակայն, առկա է նաև Ս. Գրքի այլ բաժիններում. «Արդ զգոյշ լեր, զուցէ ըմպիցես գինի եւ օղի» (Դատ., ԺԳ, 4): (Տե՛ս նաև Դատ., ԺԳ, 7, 14): *Օղի* բառի հուն. Համապատասխանակը σικερα-ն է, լատ. sicera, ռուսերեն Աստվածաշնչում նույնպես՝ сикера, ֆրանս. boisson alcoolique (Դատ., ԺԳ, 13):

Հայերենում օղի բառով կազմություններից են *ամբրաւօղի, մեղրօղի, հացօղի* (վերջինս ՆՀԲ-ում վկայված չէ): Նշված երեք բառերը վկայել է Հ.Մանդակունին (V դ.): «Գինի և ցքի ոչ ըմպելին, զի գինի եւ հացօղի և մեղրաւղի մի են, գոր գիրք վկայեն» (ՄՀ, Ա, 1284): (Ամբրաւաղի-ն արմաւօղին է. տե՛ս ՆՀԲ, *Արմաւօղի* բառահոդվածը):

Օղու և գինու տարբերությունը ոչ միայն հումքի հետ է կապված (հնում *գինին* պատրաստում էին միայն խաղողից), այլև թնդության աստիճանից: Պատահական չէ, որ ՆՀԲ *օղի* բառը բացատրում է. «Ցքի. ըմպելի բարկ՝ ոգելից»:

Օղի բառի համար Գ. Ջահուկյանը ենթադրում է հ.-ե. ծագում. *aulio-, *au(e)- «հոսել, թաց, ջուր» արմատից (ՋՀՄԲ, էջ 102):

Գ. Ջահուկյանը որպէս զուգահեռ նշում է նաև ռուս. вода և водка բառերը: Վերջիններս ստուգաբանորեն առնչվում են հայ. *գետ* (հ.-ե. ved-) հետ: Հ. Աճառյանը հ.-ե. մի շարք լեզուներից նշում է զուգահեռներ (ՀԱԲ, IV, 613): Եթե հավաստի են (լիտ. alus, հայրուս. alu, հ. ռուս. олт), ապա հայ. *օղի*-ի հ.-ե. ծագումը նույնպէս կարելի է հավաստի համարել:

Ցքի – Հայկազյան բառարանները (ԱԲ, ՆՀԲ) մեկնում են «օղի»: ՀԱԲ-ը «արմաւից պատրաստած մի տեսակ արբեցուցիչ ըմպելիք, օղի», նույն բացատրությունն է ՋՀՄԲ-ում: Բառը ստուգաբանված չէ: 5-րդ դ. ինքնուրույն գրականության մեջ հաճախական գործածություն չունի: Բառը վկայված չէ Կորյունի, Եզնիկի, Ագաթանգեղոսի, Բուզանդի, Եղիշեի, Փարպեցու աշխատություններում: Վկայություն ունի միայն Հ. Մանդակունին:

Ս. Գրքում *ցքի*-ի հուն. համապատասխանակը, ինչպէս *օղու* դեպքում՝ σιχερα-ն է. հմմտ. «Գինի և ցքի մի՛ ըմպիցեք...» (Ղեււ., Ժ, 9). հուն. οίνον και σικτρα. ռուս. «вина и крепких напитков», ֆր. boisson alcoolique:

Ցքի-ն երբ. shekar, հուն. sikera բառերի թարգմանություն համարելը ճիշտ չէ: Հայ. *ցքի*-ն երբայերենի կամ հունարենի համապատասխանակի տառադարձման փորձ է:

Հ. Հացունին օղու և ցքի-ի աստվածաշնչյան վկայությունների հիման վրա ենթադրում է, որ «երկու հայեցի կոչմունք... գոնէ կհամոզեն զմեզ՝ թէ *մեր քով այ կային արուեստական ըմպելիք*, թէև ոչ շատ յաճախեալ» (Հացունի, 23, ընդգծումը մերն է – Լ.Հ.):

Կարծում ենք՝ այս ենթադրությունը առարկելի է, որովհետև հիշյալ ոգելից խմիչքների վկայությունները հիմնականում թարգմանական գրականությունից են, կապ չունեն հայկական իրականության հետ:

բ) Գարեջուր

Բառի երկու բաղադրիչները հ.-ե. ծագում ունեն: Գարու մշակման նախնական տարածքը համարվում է Առաջավոր Ասիան և Աֆրիկան (Гамкредидзе, Иванов, էջ 656): Հայերենում բառը, ինչպէս և գարեհաց (գարեաւ հացիւ) հինգերորդարյան վկայություններ են, *գարին* նաև չափման (կշռի) միավոր է (ՆՀԲ, I, 531):

Գարեջուր բառը վկայված է ուշ շրջանից: ՆՀԲ-ում V-XII դարերից վկայություն չկա: Բառարանների (ՆՀԲ, ԱԲ) բացատրություններն էլ՝ «ջուր գարւոյ» որոշակի որակական հատկանիշներ, ըստ էության, չեն նշում:

Հայաստանում այդ խմիչքի արտադրության մասին հիշատակում է Քսենոփոնը. «Տներն այստեղ գետնափոր էին, մուտքը ինչպէս ջրհորի բերան... Այնտեղ կար նաև ցորեն և գարի և ընդդէմ և կրատերների մեջ գարուց պատրաստված գինի, որի երեսին լողում էին գարու հատիկներ» (Քսենոփոն, էջ 97): Թարգմանիչը ծանոթագրում է, որ այս համա-

տեքստում *կրատեր* նշանակում է գինու խոշոր կարաս: (Էջ 261):

Հայ թարգմանիչը հուն. οινος-ը թարգմանել է «գինի»՝ հարազատ մնալով բնագրին: Հունարենում բառը ունի երկու իմաստ. 1. գինի, 2. գարեջուր (Φαμερ, II, 1159): Քսենոֆոնը նաև նշում է, որ այդ «Գինին շատ թունդ է, եթե ջուր չխառնեին»:

Գարուց պատրաստված ըմպելիք հասկացությունը ունի նաև այլ անվանումներ:

Գարեջուր-ի ավելի հին անվանումն է *կասկաջուր*-ը, որի առաջին բաղադրիչը մ.պրս. *kašk, պրս. kask «գարի» բառն է: Արդյոք *գարեջուրը* և *կասկաջուր* ոգելից խմիչքներ էին, թե այլ որակ, ու կիրառական առանձնահատկություններ ունեին: Այս հարցի հստակ պատասխան դժվար է գտնել: *Կասկաջուր*-ը, ըստ երևույթին հիմնականում դեղամիջոց էր: Այդպես է ամենահին վկայության մեջ՝ «Վարք Եւագրայ»-ում. «Ոչ կերեալ խաւարտ և ոչ քանջար դալար... այլ հաց և գինի ամենեւին ոչ ճաշակեալ: Բայց յորժամ կարի տկարացաւ մարմինն ի խիստ վարուցն, սակաւ մի կասկ ընդ արմաւաջուր խառնեալ վասն կարի ցաւոյ ստամոքսին զայն էառ ջեռուցեալ հրով. այլ ի հաց և ի գինի և ոչ ի կարի կարեպետս հիւանդութեան մերձեցաւ: Բայց միայն ճաշակէր սուղ ինչ քանջար և ունդս և կասկաջուր մինչև ի վախճանն» (Վրք. հրնց., հտ I, էջ 322):

Գարեջուրը՝ որպես դեղամիջոց, բազմիցս նշում է նաև Մ. Հերացին. «Թէ կարիք լինի զմարմինն սրբելոյ սրբէ գարեջրով և քաղցր նոան ջրով» (41), «... տո՛ւր շնխաղող ջրով և տուր գարեջուր հունապով» (72):

Մ. Հերացու գրքում բազմաթիվ դեղամիջոցներ կան որևէ բուսանուն+ջուր բառակապակցությամբ, ինչպես *շնախաղող ջրով*, *գնձի ջուր*, *գառնալեզուի ջուր*, *մրգաջուր*, *վար-*

դի ջուր, *աղտորի ջուր*, *նոան ջուր*, *սիսոան ջուր*, *դդմի ջուր...* (Էջ 72-73, 95-96): Սրանք հյուրերի անվանումներ են, իսկ վերջին երկուսը կարող են լինել ուտելիքի տեսակներ՝ *խյուս*: Հմմտ. «Եւ զկերակուրն հացի փշրուկ տուր, և ճակնտեղի բազուկ և սիսոան ջուր զամէնդ քաղցր նշի ձիթով» (83):

Վերը նշված «ճաշակէր սուղ ինչ *քանջար* և *ունդս* և *կասկաջուր*» (ընդգծումը մերն է – Լ.Հ.) շարքում *կասկաջուր*-ի համար ենթադրելի է և ուտելիք (զուցե ջրով եփած գարի) իմաստ:

Հավելենք նաև, որ Վ. Հացունու աշխատության մեջ *գարեջուր* և *կասկաջուր* – ոգելից խմիչքների շարքում չկան:

Գարեջուր բառի հոմանիշ կարելի է համարել և *գարեկորկոտ/գարեկորկոտը*: ՆՀԲ-ն մեկնում է. «կորկոտ գարւոյ»՝ հղելով Գիրք Վաստակացի ը գլուխը՝ առանց բնագրային վկայության: Ահա այդ օրինակը. «...Գիճային գինին լաւ է ... քան չորային գինին և այսու ամենայնիւ փրկին մարմինք այնպիսեաց ի վշտաց և ի բազում ախտից. և գարեկորկոտն լավ է նոցա» (Վստկ., էջ 8): «Գիրք Վաստակոցի» ծանոթագրության մեջ բացատրվում է այդ բառի իմաստը և նշվում հունարեն համապատասխանակը. «ըմպելի գարւոյ, ըստ յունին πτωσάνη (ն.տ.): Հունարենում բառը ունի «գարուց պատրաստված ըմպելիք, կամ եփուկ» (Ячменный напиток или отварь) (Дворецкий, 1437): Բնականաբար ՆՀԲ-ի բացատրությունն էլ ճշգրտման կարիք ունի:

Գարեջրի մասին տեղեկություններ է հաղորդում նաև Ամիրդովլաթ Ամասիացին. «Թէ զգլուխն գարե ջրով լուանան՝ զմոռացկոտութիւնն տանի, եւ գլխուն գիճութիւն տայ...» (Անգ. Անպ. 109): Գարեջուրն զավելի խլտերն կու հանէ. եւ թէ ցորենի ջրով... եփեն՝ զկաթն և զգոգն յորդորէ (ն.տ. 341): Այս օրինակներում էլ, ինչպես նկատելի է, գարեջուրը դեղամիջոց է, և հստակ չէ հեղուկ թե ավելի թանձր նյութ լինելը: Նույն

հեղինակի գրքում հանդիպում ենք և *գարու գինի* (ընդգծումը մերն է – Լ.Հ.) հասկացության, որն անշուշտ ոգելից թույլ խմիչք է. «Ցորենէն եւ գարուն և կորեկէն եղած գինուն ուժն ցած է և զգոզն յորդորէ» (ն.տ., 404):

Գարի բաղադրիչով (նկատի ունենք նաև *կասկ* «գարի» բառը) կան մի շարք կազմություններ: Որպես ոգելից խմիչք կարելի է համարել Քսենոփոնի՝ «գարուց պատրաստված գինի» և Ամիրդովլաթի *գարու գինի* վկայությունները:

5. ՀԱՐԲԵՑՈՂՈՒԹՅՈՒՆ, ԳԻՆԸՄՊՈՒԹՅՈՒՆ

5-րդ դարի տարաբնույթ գրականության մեջ, ի թիվս այլ հարցերի, բազմաթիվ վկայություններ կան նաև հարբեցողության վնասների ու վտանգների, հարբեցողությունը մերժելու մասին:

Գ. Լուսավորիչը ավելի խիստ է հարբեցող հոգևորականների հանդեպ, որոնց արգելում է պատարագ մատուցել մինչև «բազում արտասուաւք եւ գթով տնանկաց ապաշխարեսցէ, զի արբեցողք ընդ սպանողս են» (ՄՀ, Ա հատ., 144):

Լուսավորչի 9-րդ ճառի մի ամբողջական հատված նվիրված է հարբեցողության քննադատությանը. «Գինի առավել յիմարեցուցանէ զգայութիւնսն և զմիտսն եւ եռացուցանէ զցանկութիւնսն և յանառակութիւն շարժէ, ... գինի թմբրութիւն սրտի, պապանձումն բերանոյ, խաւար աչաց, խլութիւն ականջաց, լուծութիւն ձեռաց, գայթակղութիւն ոտից, ցնորք խորհրդոց, ծանրութիւն քնոյ, թշնամի արդարութեան: (ՄՀ, I, 57):

Հաջորդ պարբերության մեջ նշում է հիվանդների և տկարների համար գինու չափավոր օգտագործման անհրա-

ժեշտությունը, իսկ առողջներին և հատկապես երեխաներին խորհուրդ է տալիս գինի չխմել:

Սահակ Պարթևի 33-րդ ճառն էլ վերնագրված է «Վասն ոչ առնել գինարբուս ի լալիս» (ՄՀ, I, 161):

Նման բնույթի է նաև Հ. Մանդակունու. «Վասն արբեցողաց անաւրէնութեանց» ճառը: Ահա մի հատված. «Անչափութեամբ գինւոյն զեղխեալ յիմարին եւ թմբրին իբրեւ զանբան անասունս... եւ դու յանառակ արբեցութեանդ թմբրիս և յիմարիս և ի մտաց անկանիս, եւ չես ի մարդկան համարի, այլ ի վայր եւս քան զանասուն» (ՄՀ, I, 1226):

Մեկնաբանելով Աստվածաշնչի «Անառակ է գինի, եւ թշնամանող է արբեցութիւն...» (Առակ, Ի, 1) հեղինակը հավելում է. «Ոչ թէ զըմպելն արգել, այլ զարբենալն»:

Խորենացին հարբեցողներ է համարում ժողովրդականներին ու զօրականներին. «Ժողովրդականք ստահակ... անվաստակ արբեցողք... Զօրականք անարիք, սնապարծք... գինարբուք» (III, ՀԸ):

Իսկ ըստ Եզնիկի՝ «Գինի զբազմութիւն ախտից զարթուցանէ և զերկիւղն Աստուծոյ հալածէ» (303):

Հարբեցողությունը պախարակելու նմուշներ կան նաև հետհինգերորդարյան գրականության մեջ: Միմեոն Աղձնեցին գրում է. «Գինարբութիւն մատն կախարդաց և մատռուակ չարին: Արբեցութիւն շուն կատարեալ և զիւր մարմինս ուտէ: Գինարբուն խաւար պատրոյգ և շիջեալ լոյս, թշուառական կեանք, պսակ փշոց և զինդ ոսկի ի քիթս խոզի» (ՄՀ, Ժ դար, հտ. Ժ, 93)*:

* Հարբեցողության քննադատություն կա նաև հին՝ ոչ քրիստոնեական գրականության մեջ: Ահա մի հատված գրադաշտական տեքստերից. «Չափից ավելի գինի խմողները ունեն շատ թերություններ, որովհետև գինին նվազեցնում է նրա բանականությունը, խելքը, սերմը և արյունը,

Ընդհանրացնելով վերոհիշյալ վկայությունները՝ ակնհայտ է դառնում այն, որ բովանդակային և ժամանակագրորեն տարբեր բազմաթիվ աշխատություններում մերժվում, պախարակելի երևույթ է համարվում հարբեցողությունը, իսկ չափավոր խմելը նույնիսկ խրախուսվում է**:

Գրաբարում *հարբել, գինովանալ* հասկացությունը արտահայտվում է մի շարք բառերով ու բառակապակցություններով, դարձվածային միավորներով:

1. *Արբ* արմատով մի շարք կազմություններ: Այս արմատը ունի «խմել» և «հարբել» իմաստը: Ըստ Ս. Գրքի՝ առաջին հարբած մարդը Նոյն էր. «Եւ սկսաւ Նոյ, այր հողագործ, զերկիր գործել, եւ տնկեաց այգի, եւ արբ ի գինւոյն եւ արբեցաւ, և մերկացաւ ի տան իւրում» (Ծննդ., Թ., 20-21): Աստվածաշնչյան՝ Նոյի հարբելու վերաբերյալ Հ. Մանդակունին ունի իր բացատրությունը. «... զի և Նոյի հրամայեաց ըմպել գինի վասն տրտմութեան, զի ցՆոյ գինի ոչ էր, բայց միայն խաղող» (ՄՀ, հտ. Ա, Ե դար, 1284):

Արբենալ – ունի հիմնականում «հարբել, գինովանալ» իմաստը:

Արբ արմատով կազմություններից են *արբենամ, արբեցութիւն, արբեցուցանեմ... Արբեցություն* բառի հոմանիշ է և գինութիւնը՝ եզակի վկայությամբ:

բայթայում է սիրտը ... թուլացնում է ուժը, դիմադրողականությունը, մոռացնել է տալիս աղոթքը և աստծուն փառաբանելը» (Зораст, 96):

** Արժե հիշել Վ. Այգեկցու առակը, ըստ որի թագավորի որդին շատ հարբած վիճակում ընկնում է աղբանոցում և մեռնում: Թագավորը հրամայում է քանդել բոլոր այգիները և ջարդել գինու կարասները: Մի պառավ կին, այդ հրամանին չենթարկվելով, ամեն օր մի բաժակ գինի է տալիս տղային, որը ուժ է տալիս վերջինիս, և նա սպանում է առյուծին: Թագավորը հրաման է տալիս վերականգնել այգիները և այնպես խմել, որ առյուծ սպանել և ոչ թե աղբանոցում մեռնել: (Տե՛ս Մխիթար Գոշ, Վարդան Այգեկցի, Առակներ, Ե., 1951, 78-80):

Արբ արմատով վկայված մի շարք կազմությունների իմաստների համադրությամբ Հ. Աճառյանը նկատում է, որ «խմել» իմաստը հետզհետե տեղի է տալիս «հարբել» իմաստին (ՀԱԲ, I, 299):

Ենթադրվում է հին *արբանեմ բայի գոյությունը, և «նոր լեզուն պահում է միայն «գինովնալ, հարբել» նշանակությունը (ն.տ.): Աշխարհաբարի և բարբառների հ-ով ձևերը Աճառյանը համարում է հ.-ե. s-ի «թանկագին մեկ մնացորդ» (ն.տ.):

2. *Գինի* բաղադրիչով մի շարք կազմություններ *գինարբու, գինեզէն, գինեխազութիւն, գինեկիզութիւն, գինեճանութիւն, գինեմոլ, գինենալ*:

Ուշադրության արժանի է *գինի* և *զէն* բաղադրիչներով կազմված *գինեզէն* «հարբած», *գինեգինութիւն* «հարբելը», *գինեգինել* «հարբել» բառերի երկրորդ բաղադրիչի հարցը: ՆՀԲ-ում երկրորդ բաղադրիչը նույնացվում է զէն «զենք»-ի հետ: *Գինեզէն* «գինով զինեալ, այսինքն արբեալ կամ արբեցուցեալ»: ՆՀԲ-ի այս ստուգաբանությունը առարկելի է: Կարծում ենք զէնը իրանական *zadan* «խփել, հարվածել»-ի *zan* ներկայի հիմքն է, որը բառակազմական կաղապարով նույն է, ինչ հայերենում *գինեհար*՝ բառացի «գինու խփած, հարվածած», հարբած: Բերենք մեկական օրինակ. «Գինեգինեալ ի խնջոյսն՝ վավաշոտեր ի կին մի»: «Գինեհարութիւամբք, անառակութեամբք, արբեցողութեամբք» (ՆՀԲ, I, 553):

Կա և *գինեզենեալ* գրությունը, որտեղ ակնհայտորեն երկրորդ բաղադրիչը *զէն*-ը չէ:

Գինեճան – բառում ճանը իրանական չան ածականակերտ ածանցն է:

Բերենք հայ մատենագրությունից *գինի* բառով մի քանի դարձվածներ՝ «հարբել, հարբեցողություն» նաև «գինի խմել» իմաստով:

Ընդ գինիս մտանել «հարբել»: «Եւ իբրեւ ընդ գինիս եմուտ Բաղդասար հրամայեաց բերել զսպասս արծաթոյ» (Դանիէլ, Ե., 2): «Ապա իբրև ընդ գինիս մտին, քաջ արբեալ լինէին թագաւորն և որ ընդ նմայն էին...» (Բուզ., III, Ի):

Ի գինուջ լինել: «Եւ ինքն ի գինուջ էր և ամենայն թագաւորք, որ ընդ նմա ի խորանս» (Գ. Թագ., Ի 12):

Գինին զալ զակամբ: «Գինի խմելուց հարբել, աչքերը մթագնվել»: «Գինին եկն զակամբ նորա» (Բուզ., 174):

Ջայրանալ ի գինույ: «Աւուրք թագաւորաց ձերոց, սկսան իշխանք զայրանալ ի գինույ, եւ ձգեցին զձեռս իւրեանց ընդ ժանտագործս» (Ովսէ, Է, 5): Աշխարհաբար թարգմանվում է... «վառվել գինուց»:

Հինգերորդ դարի մատենագրությունից այլ օրինակներ.

«Եւ եղև իբրև անցին զառանցին ի գինույն՝ ըստ չափ անցանելով, և թագաւորն Վարագդատ պահէր զանձն ի գինույն...» (Բուզ., III, ԼԷ):

«Գինի կալաւ զխմելս նորա...» (ՆՀԲ, 70):

«Կիզան ի համոյ հրաբաժակ գինույն» (Ազաթ., 253):

«Դարձեալ երբեմն ի խնջոյս ուրախութեան Խոսրով Գարդմանացի ի գինուջ զեղիւեալ առաջի Շապիոյ՝ զօրէն սեղեխի տոփեցելոյ զհետ ջնարահար քաջամասն կնոջ կրթէր» (Խոր., III, ԾԵ):

Ջզլխել գինույ «հարբել» բառակապակցութեամբ եզակի վկայություն ունի ՆՀԲ: «Կարի արբեցող զայն ասեմ, որ ոք յոռի գինովն զզլխիցէ» (ՆՀԲ, I, 727):

Գլխեմ - բառարանը հղում է տե՛ս *զլխաւորել*: Վերջինս բազմիմաստ է, բայց հարբեցողության հետ առնչվող որևէ նրբիմաստ չունի: Գ. Ջահուկյանը հ.-ե. հիմքեր ունեցող գ նախածանցով կազմությունների շարքում նշում է *զզլխեմ* (Ջահուկյան, 1987, 243): *Ջզլխել գինույ* կապակցության մեջ

զլխել-ի «կործանել» իմաստը կա ՀԱԲ-ում (I, 565), որով պարզ է դառնում կապակցության իսկական նշանակությունը:

Ժամանակակից հայերենում, հատկապես ժողովրդախոսակցական լեզվում, նման կարգի դարձվածները ավելի շատ են: Դրանց մի մասը (երևի զգալի մասը)՝ որպես ոճական յուրահատուկ արտահայտություն կապ ունի գրաբարյան լեզվամտածողության հետ, օրինակ՝ *գինեհար*, *գինեզան* բառերի երկրորդ բաղադրիչները փոխակերպված կազմություն կարելի է համարել *գինին զլխին խփել (զարկել)* դարձվածները:

Գինի + *կիզանել*, *այրել* գրաբարյան բաղադրիչներով կազմությունների համապատասխանակ կարելի է դիտել *զլուխը (կատարը, քյսլլան) տաքանալ* «զինովնալ, հարբել» և այլն:

*
* *

Մխալակ բառի եզակի վկայությունը Աստվածաշնչից է. «Շարժելով շարժեցի երկիր, իբրեւ զարբեալն եւ զսխալակ, զլորեցի եւ և մի՛ կարասցէ կանգնել» (Եսայի, ԻԴ, 20): Արմատական բառարանում *սխալ* և *սխալակ*-ը առանձին գլխաբառեր են: Վերջինիս համար նշվում է «հարբած» իմաստը՝ վկայակոչելով Ս. Գրքի վերոգրյալ հատվածը:

Արբեալ-ը և *սխալակ*-ը հոմանիշներ չեն: *Մխալակ* նշանակում է «հարբածությունից երերող, օրորվող»: Այդպես էլ թարգմանված աշխարհաբար. «Հարբածի ու երերողի պէս պիտի գլորուի եւ պիտի չկարողանայ կանգնել»:

Ի դեպ, ՆՀԲ-ն իրավացիորեն նշում է «զայթոտ որպէս զարբեալ»: Գրաբարի և հունարենի նշված հատվածները համեմատելով՝ Ա. Մեյենն նկատել է շարադասական մի առանձնահատկություն, որով հիմնավորում է *սխալակ*-ի նրբիմաս-

տը: «Եսայի մարգարեի այս հատվածում Յոթանասնիցը և հայերեն թարգմանությունը, թեև վերջինս կախում ունի առաջինից, տողերի հերթականության և այս հատվածն արտահայտելու ձևի, այսինքն ոճի մեջ ներկայացնում են բավականին մեծ տարբերություններ... սակայն արժե նկատել, որ հայերեն բնագրի ձեռագրային համեմատությունը լավ է բացահայտում *սխալակ* բառի իմաստը... երկիրը ինչպես հարբած մարդ, դողում է, երերում, տատանվում և փուլ գալիս (Մեյե, 1978, 64-65):

Մխալակ-ը պահել է հ.-ե. համապատասխան արմատի (ըստ Արմ-ի sqhal, ըստ Մեյեի և Ջահուկյանի *skhal- *skhel-) «սայթաքել, երերալ, տատանվել», նախնական իմաստը*:

*
* *

Հարբեցությունից սթափվելու, զգաստանալու հասկացությունը գրաբարում արտահայտվում է *թափել զգինի* (երբեմն սթափել զգինի) բառակապակցությամբ (Մադմոս, ՀԷ, 65):

Գիրք վաստակոց-ը առաջարկում է չհարբելու մի յուրօրինակ միջոց. «Առ զխոտն որ կոչի քամափիթոս և գտակ շինեա և ի գլուխդ դիր, այն օրն քանի խմես չարբենաս: Եւ թէ առնուս երկու գլուխ ծիծռան, մէկն որձ, մէկն մարի և լեսես մանր և սակաւ մի մուռ ծրար առնես և ի զինին ձգես, այլ չարբեցուցանէ՝ քանի շատ խմէ որ» (Վստկ., 123): Ծանոթագրվում է, որ քամափիթոսը լեոնային դաղձն է, «որ կոչի ի մեզ և խոռն» (ն. տ., 263): *Խոռնը* այժմ էլ գործածական է

* Ղարաբաղի բարբառի *լուլ* «սատիկ հարբած» բառը գրաբարում թեև ավանդված չէ, բայց բնիկ հայերեն բառ է՝ հ.-ե. *lel «երերալ, շարժվել» (Ջահուկյան, 1972, 295):

Ղարաբաղի բարբառում: *Մուռ*-ը գրաբարում գործածվում է *զմուռու* ձևով:

Եթե բացառելի չէ լեոնային դաղձի օգտակարությունը, ապա *ծիծառն*-ի հետ կապը ինչ-որ անմեկնելի միջնադարյան խորհրդանիշ է:

Գրաբարում *զինեհատ լինել, զինեհարություն* նշանակում է «Գինուց՝ խմելուց հրաժարվել, ոգելից խմիչք չօտագործել»: Հ. Մանդակունին «Վասն պնդութեան» ճառում գրում է. «Ոմանք զինեհատք միայն, ոմանք թանահատք, այլ և ոմանք հացահատք լինելին» (ՄՀ, Ա հատ., 1172): *Գինեհատությունը* բառի մի վկայություն նշում է ՆՀԲ՝ Եղիշեից:

Գիրք Վաստակոցի «Վասն դեղոյ որ զինեսեր մարդն զգինին ասէ» բաժնում առաջարկվում է հետևյալ միջոցը. «Ժողովեա ի հօտին ժամն զջուրն որ ելանէ ի տնկոյ այգւոյն, և տուր գաղտ որ խմէ, ասէ զգինին յափտեան» (Վստ., 123):

*
* *

Նպատակահարմար գտանք այս ենթաբաժնում անդրադառնալ *մատուակ* բառին: Բառը վկայված է V դարից:

Մատուակի հոմանիշներ են համարվում *զինեպաշտ, տակառապետ* բառերը: Գ. Ջահուկյանը այդ շարքին հավելում է և *արբուցիչ*-ը (Ջահուկյան, 1987, 392)՝ հավանաբար նկատի առնվով ՆՀԲ-ի *մատուակն արբուցիչ* վկայությունը (ՆՀԲ, I, 343): *Գինեպաշտ* - ՆՀԲ չի վկայում, բայց կա *զինեպաշտություն* «մատուակություն»: Բնականաբար ենթադրելի է նաև *զինեպաշտ*-ի գոյությունը: Ե. Մեղրեցու բառարանում կա *թասատու* «մատովակ» բառը, (Տե՛ս ՀԱԲ, II, 156): Գինեպաշտ, զինեպաշտություն բառերի *պաշտ*-ը ունի

«ծառայել, սպասավորել, մատուցել» իմաստը: *Պաշտ*-ի հին ձևը *պարիշտն* է: (Պաշտ) պարիշտ իրանական լեզուներից կատարված փոխառություն է: Գրաբարի բառարաններում չարձանագրված *բերանապարիշտ* «մատովակ», բառացի՝ «բերանի ծառայող» վկայված է V դարից: (Հովհաննիսյան, 2010, 73):

Մատռուակը ՀԱԲ-ում ստուգաբանված չէ: Գ. Ջահուկյանը համարում է իրանական փոխառություն (Ջահուկյան, 1987, 533):

6. Գինու ամանի անվանումներ

Գրաբարում *աման* «անոթ, շտեմարան, մթերանոց» վկայված է V դարից: Բառարանները (ՀԱԲ, ՋՀՍԲ) նշում են այդ բառով մի շարք բաղադրություններ, սակայն գրաբարյան շրջանից վկայված են թերևս միայն *խնկաման* և *գինեման* «գինու աման» բառերը:

Գրաբարում մոտ տասնյակ բառեր *ջրի, հեղուկ նյութի* (հնարավոր է նաև գինու) անոթների անվանումներ են (տե՛ս Հովհաննիսյան, 2012, 48-61): Այդ կարգի բոլոր բառերին չենք անդրադառնա: Կբերենք միայն գրաբարի բառարաններում որպես «գինու աման» նշված, կամ համատեքստում այդպիսին գիտակցվող, որոշ դեպքերում նաև միջին հայերենից վկայված իմաստները:

Ապակի-ն ունի «շիշ, բաժակ» իմաստը. «Ապակի ի ձեռին, և արկեալ գինի» (ՆՀԲ):

Առաստակ «գինու թաս, գավաթ» (ՀԱԲ, ՆՀԲ): Գրաբարում բառը հաճախական չէ: Թարգմանական գրականությունից վկայված է մեկ օրինակ:

Բաժակ – Հաճախական կիրառություն ունի 5-րդ դարից: Փոխաբերաբար նշանակում է նաև «գինի» (ՆՀԲ, ՀԱԲ):

Բղուղ «կարաս, մեղրի, յուղի, գինու աման» (ՆՀԲ): Վկայությունները միջինհայերենյան շրջանից են:

Գաւաթ «բաժակ»: Գրաբարում հաճախական չէր:

Գինեհան «կարասից գինին հանելու անոթ»: ՆՀԲ ունի մեկ վկայություն՝ Շիրակացուց:

Գուր-ը գրաբարում ունի «հոր, ջրհոր, փոս» իմաստը: X-XI դդ. մատենագրության մեջ վկայված գուր բառը գործածվել է թերևս այլ իմաստով:

Հ. Դրասխանակերտցին գրում է. «Լցան գուրքք գինույ ի կութս այգեստանեայց» (ՄՀ, հտ. ԺԱ, 481): Իսկ Լաստիվերտցին՝ «Ոչ լնուն կալք ցորենով և ոչ գեղուն գուրքք գինուով...» (ՄՀ, հտ. ԺԶ, 581):

Գինին փոսի, հորի մեջ լցնելը անտրամաբանական է: Հեղինակները, ըստ երևույթին, նկատի են ունեցել գինով լցված կավե ամանը՝ կարասը, որը թաղում էին փոսի մեջ: Այդ ավանդույթը այժմ էլ կա: ՆՀԲ-ում վերոհիշյալ վկայությունները արձանագրված չեն:

Դղում «պտուղ դդմենույ, որ լինի աման գինույ» (ՆՀԲ): Օրինակները ուշ գրաբարյան և միջինհայերենյան շրջանից են: Միջին հայերենի բառարանում բառը արձանագրված չէ, կա *դղմակ* «երկայնաձև դղումից պատրաստված աման՝ ջրի կամ գինու համար: Դղմակ մի նռան գինի»:

Ումպ արմատով մի շարք բաղադրություններ. *ըմպակ* «բաժակ», *ըմպանակ*, *ըմպարան* «բաժակ», *ըմպելի* «բաժակ», *ըմպիկ*, *ըմպելիքախառնոց* «գինու բաժակ»:

Դորակ «ջրի, գինու ամաններ» նաև չափի միավոր. «Եւ նուէր ըստ չորրորդ դորակի գինույ... (Ելք, ԻԹ, 40):

Թակոյկ «ջրի, գինու մեծ աման»: Հաճախական գործածություն ունի 5-րդ դարից: Վկայված է և Աստվածաշնչում. «Ուր կային թակոյկ և ըմպելիք» (Եսթեր, Ա. 7):

Ժամանոց «գինու, ջրի սրվակ»: «Առ ժամանոցս զայս ի հեղուլ գինի» (ՆՀԲ): *Ժամանոցը* պատարագի արարողությանը վերաբերող հասկացություն է: Եթե բառարմատը *ժամ*-ը դիտվում է որպես իրանական լեզուներից կատարված փոխառություն, ապա *ժամանոց*-ը պետք է համարել հայերեն բառ և ոչ թե փոխառություն:

Խառնարան «թակոյկ, բաժակ»: «Եւ խառնեաց ի խառնելիս զգինի իւր և պատրաստեաց զսեղան իւր» (Առակ, թ. 2): Բառը Աստվածաշնչի համաբարբառում չկա: Ըստ ՆՀԲ-ի՝ հունարեն համապատասխանակը *κρατηρ*-ն է՝ «1. Գինին խառնելու աման, 2. Գինու բաժակ» (Дворецкий, 979):

Խառնարան-ը հունարեն համապատասխանակի պատճենում-թարգմանություն է*:

Խառնակ «խեցեղեն փոքր աման, սափոր»: ՆՀԲ-ն և Արմ-ը նշում են նույն օրինակը՝ Ոսկեբերանից:

Կահոյր-ը մեկ անգամ վկայել է Բուզանդը՝ «կահոյր մի ջուր» (ՆՀԲ, ՀԱԲ): Բառարանները բացատրում են «ջրի աման, սափոր»:

Կարաս – «Անօթ խոր և մեծափոր ... ընդունարան քաղցուղյ և գինույ» (ՆՀԲ):

Կթոյայ/Կթխայ «թաս, բաժակ»: Վկայված է միջինհայերենյան շրջանից. «Սուրբ և անապակ գինի բերես, սափոր, կթոյան ի վայր թափես» (ՄՀԲ, 372): Բառարանն ունի և *կթոյայրնկեր* «բաժակի ընկեր, բաժակակից»:

* Չույները գինին անխառն չէին խմում, այլ խառնում էին ջրի հետ: Կրատերը կավե այն անոթն էր, որի մեջ գինին խառնում էին ջրով: Մակայն Քսենոփոնի մոտ կրատերը նաև «գինու խոշոր կարաս» իմաստով է գործածված: (Տե՛ս Անաբասիս, 261), ծան. 23):

Հաղաղակ «Զհաղաղակն գինույ և գարուակն իւղոյ» (Յուդիթ, Ժ. 3): Գրաբարի բառարանները նշում են միայն այս օրինակը: Հունարենում բառի համապատասխանակը «կաշեղեն շիշ», որից ենթադրվում է կաշվից կամ փայտից պատրաստված գինու աման, տիկ: (Տե՛ս ՀԱԲ, III, 4):

Ճաշակ «ըմպանակ, բաժակ»: «Զտուփս, և զճաշակս և զնուիրանոցս» (ՆՀԲ, II, 171):

Մառան – Մթերքի, այդ թվում գինու շտեմարան: «Վաստակոց գրոց մեջ «մառանը» գինույ պահարան է միշտ» (Հացունի, 1912):

Նուագ «բաժակ, գավաթ»: Վկայություններ կան 5-րդ դ. և՛ ինքնուրույն, և՛ թարգմանական գրականությունից: «Տարգալ ունել ոսկի և պատառաքաղ, և ոսկեղինօք ըմպել նուագօք» (Խոր., II, Խէ):

Նուիրակ «բաժակ»: «Բուրուառքն ինկոցն ամանք և նուիրակքն գինույն» (ՆՀԲ):

Նուիրանոց «բաժակ»: ՆՀԲ-ի վկայությունները հիմնականում թարգմանական գրականությունից են:

Մակարան – ՆՀԲ-ում վկայված չէ: Աճառյանը այն համարում է «անորոշ նշանակությամբ նորագիւտ բառ»: Ենթադրաբար արաբերեն *sāqi* «մատովակ», որից *sāqi*-արան «տեղի մատռուակաց» (տե՛ս ՀԱԲ, IV, 159):

ՀԱԲ-ում նույն աղբյուրից կա երեք վկայության: Բերենք մեկ նախադասություն. «Ասեր ցմատռուակն, եթե պակասիցե ի սակարանիցդ և երթիցես ջրոյ»: Մյուս օրինակներն էլ այդ կարգի են: Հ. Աճառյանը ենթադրում է, որ «երևի նշանակում է «մատռուակների մատանը, պահարանները, բուֆետ»:

Պատմաբան Ս. Պետրոսյանը, մերժելով արաբերենից փոխառյալ լինելը, *սակ*- արմատի իմաստը առնչում է «գինի»-ի հետ՝ այն հիմնավորմամբ, որ «ըստ Քսենոփոնի այդ

նույն արմատով կազմված Σάκκας անուն կրում էր Աստիագեսի մատովակը: Հավանաբար, դա Սակասի ոչ բուն անունն է (անձնանունը), այլ պաշտոնի անվանումը:» Հ.-ե. մի շարք լեզուներից բերելով համապատասխան բառեր՝ լատ. *saccatum* «վատորակ գինի», հին պրուս. *sackis* «բույսերի ու պտուղների հյութ», ռուս. *сок*... եզրակացնում է, որ *սակարան* նշանակում է «մառան, գինու պահեստ» (Պետրոսյան, 2006, 352-353):

Մկառ «մեծ բաժակ, թաս», որից *սկահակ* «փոքր գավաթ» (ՀԱԲ): Բառի տարբերակն է *սկհ*-ն:

Տակառ «գինու կարաս»:

Տաշտ «Անօթ ըմպելեաց՝ մեծ և փոքր» (ՆՀԲ): Կա և *տաշտակ*: Աստվածաշնչի «Եւ արասցէ պսակ սեղանոյն... եւ զտաշտն և զմսահանս...» (Ելք, ԻԷ, 3) նախադասության *տաշտ* բառի հունարեն համապատասխանակը *φιάλα*-ն է:

Տիկ «Գինու, ջրի աման»: Առաջին վկայությունները Աստվածաշնչից են. «Ամենայն տիկ գինով լցցի» (Երեմ., ԺԳ, 12): «Եւ ոչ արկանեն գինի նոր ի տիկս հինս. ապա թէ ոչ տիկքն պատառին եւ գինին հեղու» (Մտթ., Թ, 17):

Քաս «հեղուկների չափ»: Ավանդված է նաև *փաս* ձևով: Վկայություններ կան Շիրակացու գործերում, Կաղանկատվացու «Պատմություն»-ում՝ «...Թուանիկն՝ չորս գրի ցորեան, վեց գրի գարի և վեշտասան փաս քաղցու» (Տե՛ս ՀԱԲ, IV, 557):

Վերոհիշյալ բառերը իմաստային ընդհանրություններ ունենալով՝ առանձնանում են գործածության հաճախակա՛նությամբ, վկայության ժամանակագրությամբ: Որոշ բառերի՝ *գավաթ*, *թաս*, արդի հայերենում «գինու բաժակ» իմաստը ակնհայտ է, իսկ գրաբարյան վկայություններում միայն ենթադրելի է:

Կարելի է առանձնացնել բնիկ և փոխառյալ բառերը:

Բնիկ հայերեն են *աման*, *տիկ* բառերը, նաև ումպ- (ըմպ) բաղադրիչով կազմված բաղադրությունները: ՀԱԲ-ում *ումպ*-ը ստուգաբանված չէ: Գ. Ջահուկյանը *ըմպել* համարում է հ.-ե. ծագում ունեցող բառ (Ջահուկյան, 1987, 144): Բնիկ հայերեն պետք է համարել *գինեման*, *գինեհան* բառերը, որոնց երկու բաղադրիչներն էլ հ.-ե. ծագում ունեն: Փոխառյալ բառերի շարքում մեծ թիվ են կազմում միջին իրանական լեզուներից անցած բառերը. ապակի, բաժակ, բղուղ, դորակ, թակոյկ, կուժ, նուագ, նուիրակ, տակառ, տաշտ, քաս:

Մեմական լեզուներից՝ գուբ, թաս, կթղայ, մառան, սկահ...

Մնացած բառերի ծագումը ստույգ չէ:

Հնագիտական պեղումները ուշագրավ տեղեկություններ են հաղորդում մի շարք իրերի ձևի, հնության, գործածության առանձնահատկությունների մասին:

Հնագույն ժամանակաշրջան ենթադրող անոթներից են կարասները (մ.թ. ա. XXI-XIX դդ.), փարչերը (մ.թ. ա. XXIX-XXVII դդ.), սափորները (մ.թ. ա. XVI-XV դդ.), խառնարանները (մ.թ. ա. VII-VI դդ.): Ապակե սափորները և բաժակները՝ (IX-XI դդ.):*

Կարասների մասին հիշատակում է դեռևս Հերոդոտոսը: Նկարագրելով Արմենիայում պատրաստվող նավերը՝ գրում է, որ նրանք մեծ մասամբ փոխադրում են *գինի՝ կարամիր կարասներով* (Հերոդոտոս, I, 80): Թարգմանիչը ծանոթագրում է, որ հայ և օտար թարգմանիչները ընդգրկված հատվածը թարգմանել են «գինով լեցուն արմավենու տակառներ», որ սխալ թարգմանություն է. հուն. *φοινικηιοσ*

* Տե՛ս Ս.Հարությունյան, Ա.Քալանթարյան, Հ.Պետրոսյան, Գ.Սարգսյան, Հ.Մելքոնյան, Ս.Հորոսյան, Պ.Ավետիսյան, *Գինին հայոց ավանդական մշակույթում*, Ե., 2005 թ., էջ 43, 57, 60...:

համատեքստում նշանակում է ոչ թե «արմավենուց», այլ՝ «կարմիր» (Ծան., 151, 586):

Հնձան - «խաղող ճմլելու ավազան»: Առաջին վկայությունը V դարից է: Գրվում է և *հնձան*: «Ի ժողովել քեզ ի կալոյ քումմէ և ի հնձանէ քումմէ» (Երկր. Օր., ԶԺ, 13): *Հնձան* բաղադրիչով են կազմված մի շարք բառեր. *Հնձանակ* «փոքր հնձան», *հնձանահար* «հնձանում խաղող ճմլող», *հնձանահարություն*, *հնձանայարկ* «հնձանի տեղ», *հնձանաշէն* «որպես հնձան պատրաստված»: Բառակապակցություններ՝ *գուր հնձան*, *հնձան հարկանել*, *հնձան կոխել*...

Հնձան-ը ստուգաբանված չէ: ՆՀԲ-ն առաջին բաղադրիչը համարում է *հունձ* բառը: Հ. Աճառյանը չի ընդունում այդ կապը. «Ճզմելու» և «հնձելու» գաղափարները ինչպես կարող են կապուել իրար հետ. Գուցե *հնձան* նախապես ուրիշ նշանակություն ունէր» (ՀԱԲ, III, 105):

Գ. Ջահուկյանը ենթադրում է որպես խեթերն բառ. GIS hanza(n) «մի տեսակ սարք, աման» (Ջահուկյան, 1987, 314): Իսկ մի այլ աշխատության մեջ հնարավոր է համարում կապը *հունձ* «բերք»-ի հետ (ՋՀՄԲ, 464): Կարծում ենք՝ *հունձ*, *հնձել*-ի հետ կապը մերժելի չէ: Մանավանդ որ ՆՀԲ *հնձել* բառահոդվածում բացի «հնձել» (քաղել ցորենը, խոտը) իմաստից նշում է նաև «ջարդել», «կոտորել» իմաստները: ՀԱԲ-ում բառը ստուգաբանված չէ: Գ. Ջահուկյանը հավանական է համարում հ.-ե. ծագումը՝ *onkos՝ *enek «հասնել» արմատից (ՋՀՄԲ, 468)*:

* *Հնձան*-ի տեղի, դիրքի և կառուցվածքի մասին տե՛ս «Գիրք Վաստակաց», էջ 87: Այս գրքում կա *հնձան*-ի հոմանիշ *սիլայ* բառը (էջ 87): Հ. Աճառյանը այն համարում է նորագյուտ բառ: Բառը ՀԱԲ-ում բացատրվում է «խաղող կոխելոյ հնձան», իսկ «Գիրք Վաստակոցի» հրատարակիչը ծանոթագրում է. «հնձան կամ ընդունարան,, որում խաղող կոխեն» (259): Կարծում ենք, *սիլայ*-ն հնձանի ինչ-որ մաս է:

Մառան - «Ներքին և մթին սենեակ ամբարելոյ զպետս խոհարանի. Մթերանոց ուտելեաց և ըմպելոց» (ՆՀԲ): Ըստ ՀԱԲ-ի «շտեմարան (գինու, կերակրեղենի և այլ մթերքների)»: Է. Աղայանի բացատրական բառարանում զանազան մթերքների պահոց բացատրությունից հետո նշվում է «մասնավորապես գինին պահելու նկուղ» (970): Հ. Աճառյանը ենթադրաբար համարում է ասորական փոխառություն. ասոր. madāna «շտեմարան, մառան»: Գ. Ջահուկյանը անվերապահորեն ընդունում է այդ ստուգաբանությունը: Ասորերենի և հայերենի իմաստային ընդհանրությունը ակնհայտ էր սակայն, առկա է հնչյունափոխության, (մեր կարծիքով լուրջ) անհամապատասխանություն: *Մառան*-ը վկայված է 5-րդ դարի մատենագրության մեջ, և անշուշտ, այն գործառել է ավելի վաղ շրջանից: Գրաբարի փոխառյալ բառերում միջձայնավորային d(θ)-ն հայերենում տառադարձվում է ոչ թե n-ով, այլ՝ r-ով: Հմմտ. պրթ. wydñ – հայ. *սպարանք* և այլն*:

Հ. Հմայակյանը *մառան* համարում է խեթահայկական զուգահեռ. խեթ. marnuwa «խմիչքի տեսակ» (Հմայակյան, 2016, 162):

Բնագրի ավելի ամբողջական օրինակը. «Եւ հնձանին մեկ դեհն փոքրագոյն հնձան պիտի ... եւ թէ զսիլայն որ ի ներքս ի մառանն առնու, լան այն է: Եւ թէ զխողովակն դնես, որ քաղցուն... ի կարասն լնանի... (87):

* Հ. Հյուբշմանը մերժում է Մարկվարտի *Բագայառիճ* բառի *Bagayāda ստուգաբանությունը՝ իրավացիորեն նշելով, որ հայերենում այն պետք է լինէր Բագայար (r-ով և ոչ թե n-ով) (Հյուբշման, 1907, 319):

ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն աշխատանքում քննված է խաղողագործության իմաստային դաշտին վերաբերող 40 բառ (տերմին): Դրանք հիմնականում բնիկ հայերեն՝ հնդեվրոպական ծագումով բառերն են: Կան նաև այլ լեզուներից կատարված փոխառություններ: Մանրամասն քննված են այդ բառերի գործառական, բառակազմական առանձնահատկությունները: Նկատված է, որ *խաղող* բառը գրաբարում հաճախական չէր: Սակավաթիվ են նաև այդ բառով կազմությունները: Հայերենում ծառատեսակների անվանումներին բնորոշ է *բուսանուն+ի(ենի)* –ածանցը: Գրաբարում *խաղողենի* ավանդված չէ:

Խաղող բառի նվազ հաճախականության պատճառը այն է, որ այդ հասկացությունը արտահայտվում է մի շարք այլ բառերով՝ գինի, որթ, այգի...: Նկատելի է գրաբարում *խաղողի վազ* և դրա մասերի անվանումների բազմազանությունը (հոմանիշությունը): Հոմանիշային այդ շարքերում առկա են ինչպես բնիկ հայերեն, այդպես էլ փոխառյալ բառեր: Թերևս դրանք հայերենում գործառել են տարբեր ժամանակաշրջաններում կամ էլ եղել են տարբեր տարածքային (բարբառային) միավորներ:

Ոգելից խմիչքների անվանումներ են *գինի, օղի, ցքի*:

Մատենագրական տվյալները հաստատում են, որ Հայաստանում ոգելից խմիչքներից օգտագործել են միայն գինին: Այդ բառով կան բազմաթիվ կազմություններ, այդ թվում հատկանուններ: Մատենագրության մեջ կան նաև գինու տեսակների անվանումներ:

Ցքի-ն վկայված է թարգմանական գրականության մեջ: Բառը հունարեն σικερα-ի թարգմանություն-տառադարձությունն է: Հունարեն բառն էլ եբրայական փոխառություն է:

Գարեջուր վկայված է հետգրաբարյան շրջանից: Կա հոմանիշ *կասկաջուր* բառը, որի առաջին բաղադրիչն է պրս. kask «գարի»: Բնագրային օրինակներից ենթադրելի է, որ դրանք հիմնականում դեղամիջոցներ էին կամ գարուց պատրաստված հյուս: Որպես խմիչք թերևս միայն Քսենոփոնի «գարուց պատրաստված գինի» և Ամիդովլաթի «գարու գինի» վկայություններն են:

Մատենագրության մեջ տեղեկություններ կան նաև գինումպության վերաբերյալ: Պախարակվում է հարբեցողությունը, դրվատելի համարում գինու չափավոր օգտագործումը: *Հարբել* հասկացությունը բացի *արբենալ* բառից արտահայտվում է նաև *գինի* բաղադրիչով մի շարք դարձվածքներում: Ինչպես՝ «ընդ գինիս մտանել», «գինին գալ զակամբ», «զայրանալ ի գինույ» և այլն: Այս կարգի օրինակները լեզվամտածողության, ժողովրդախոսակցական լեզվի յուրահատկությունների արժեքավոր տվյալներ են:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Ագաթանգեղայ**, Պատմություն հայոց, Տիֆլիս, 1909, Երևան, 1983:
2. **Ալիշան Ղ.**, Հայքուսակ կամ հայկական բուսաբանություն, Վենետիկ, 1895:
3. **Աղայան Է.**, Բառաքնական և ստուգաբանական հետազոտություններ, Երևան, 1974:
4. **Աղայան Է.**, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976:
5. **Աճառեան Հ.**, Հայերեն գալառական բառարան, Թիֆլիս, 1913:
6. **Աճառյան Հ.**, Հայոց լեզվի պատմություն, I մաս, Երևան, 1940, II մաս, Երևան, 1951:
7. **Աճառյան Հ.**, Հայերեն արմատական բառարան, հ. Ա-Դ, Երևան, 1971-1979:
8. **Աճառյան Հ.**, Հայոց անձնանունների բառարան, հ. 1-5, Երևան, 1942-1962:
9. **Ամիրդովլաթ Ամասիացոյ** Անգիտաց անպետ կամ բժշկական նիւթոց, Վիեննա, 1927:
10. **Առաքել վարդապետի**, Դարիժեցոյ Պատմութիւն, Վաղարշապատ, 1884:
11. Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, Վենետիկ, 1865:
12. Աստուածաշունչ մատեան Հին և Նոր կտակարանց, Վիեննա, 1929:
13. **Բարսեղ Կեսարացի**, Յաղագս վեցարեայ արարչութեան, աշխատասիրությամբ Կիմ Մուրադյանի, Երևան, 1984:
14. **Բիւզանդացի Ն.**, Հայկական բառաքնություն, Կոստանդնուպոլիս, 1880:

15. **Բիւզանդացի Ն.**, Քննադատութիւն Հայքուսակի, Վիեննա, 1925:
16. **Գարիկեան Կ.**, Հայ բնաշխարհ, Երուսաղեմ, 1968:
17. Գիրք վաստակոց, Վենետիկ, 1877:
18. **Դաւիթ Անյաղթ**, Մեկնութիւն «Ստորոգութեանցն» Արիստոտելի, Երևան, 1980:
19. **Եզնըկայ վարդապետի Կողբացոյ**, Եղծ աղանդոց, Երևան, 1994:
20. Եղիշէի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Երեւան, 1957:
21. Եւագրի Պոնտացոյ Վարք և մատենագրութիւնք, Վենետիկ, 1907:
22. **Իշօխ**, Գիրք ի վերայ բնութեան, աշխատասիրությամբ Ս. Վարդանյանի, Երևան, 1979:
23. **Կորիւն**, Վարք Մաշտոցի, Երևան, 1941:
24. **Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ.**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1-5, Երևան, 1986-2001:
25. Համաբարբառ Հին և Նոր կտակարանաց, Երուսաղեմ, 2010:
26. Հայկական համաբարբառ, Երևան, 1972-1975:
27. **Հարությունյան Ա., Քալանթարյան Ա., Պետրոսյան Հ., Սարգսյան Գ., Մելիքյան Հ., Հոբոսյան Ս., Ավետիսյան Պ.**, Գինին հայոց ավանդական մշակույթում, Երևան, 2005:
28. **Հացունի Հ.**, Ճաշեր և խնձոյք Հին Հայաստանի մէջ, Վիեննա, 1912:
29. **Հերողոտոս**, Պատմություն ինը գրքից, թարգմանությունը Սիմոն Կրկյաշարյանի, Երևան, 1986:
30. **Հմայակյան Հ.**, Գրիգոր Ղափանցյանը և իւրաքանչիւր, Երևան, 2016:
31. **Հյուբշման Հ.**, Հին հայոց տեղւոյ անունները, Վիեննա, 1907:

32. **Հովհաննիսյան Լ.**, Գրաբարի բառապաշարի իմաստային խմբերի քննություն, I մաս, Երևան, 2008, II մաս, Երևան, 2012:
33. **Հովհաննիսյան Լ.**, Բառերի մեկնությունները հինգերորդ դարի հայ մատենագրության մեջ, Երևան, 2016:
34. **Ղազարայ Փարպեցույ** Պատմութիւն Հայոց, Երևան, 1982:
35. **Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ.**, Միջին հայերենի բառարան, Երևան, 2009:
36. **Ղափանցյան Գ.**, Հայոց լեզվի պատմություն, հին շրջան, Երևան, 1961:
37. **Ղափանցյան Գ.**, Անտիպ գործեր, Երևան, 2008:
38. **Մալխասեանց Ստ.**, Հայերէն բացատրական բառարան, հ. 1-4, Երևան, 2010:
39. Մատենագիրք հայոց, հ. 1-2, Անթիլիաս-Լիբանան, 2003:
40. **Մեյե Ա.**, Հայագիտական հետազոտություններ, Երևան, 1978:
41. **Մելիք-Շահնազարեանց Կ.**, Ուղեցոյց գործնական գինեգործութեան, Տիփիս, 1885:
42. **Մովսես Խորենացի**, Պատմութիւն Հայոց, Երևան, 1991:
43. Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1-2, Վենետիկ, 1836-1837:
44. **Ոսկերեքան Յ.**, Յովհաննու Ոսկերեքանի յաւետարանագիրն Մատթէոս, Վենետիկ, 1826:
45. Ոսկերեքանի մեկնութիւն թղթոցն Պաւղոսի, Վիեննա, 1862:
46. **Պետրոսյան Ս.**, Դասերը և եռադասության դրսևորումները Հին Հայաստանում, Երևան, 2006:
47. **Պետրոսյան Ս.**, Գնունի նախարարական տոհմի և գինու պաշտամունքի շուրջ (ՊԲՀ, N 2-3, 1999 թ., էջ 175-189):

48. **Ջահուկյան Գ.**, Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, Երևան, 1970:
49. **Ջահուկյան Գ.**, Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972:
50. **Ջահուկյան Գ.**, Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987:
51. **Ջահուկյան Գ.**, Հայերեն ստուգաբանական բառարան, Երևան, 2010:
52. **Սարգսյան Ա.**, Ղարաբաղի բարբառի բառարան, Երևան, 2013:
53. **Սարգսյան Գ.**, Պատմագիտական հետազոտություններ, Երևան, 2006:
54. **Ստրաբոն**, Քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան, Երևան, 1940:
55. Վարք Սրբոյ հարանց, Վենետիկ, 1855:
56. **Քսենոփոն**, Անաբասիս, Երևան, 1970:
57. Փաւստոսի Բիւզանդցույ Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883, Երևան, 1987:
58. **Библия**, Книги священного писания Ветхого и Нового завета, Москва, 1994.
59. **Гамкрелидзе Г., Иванов Вяч.**, Индоевропейский язык и индоевропейцы, т. II, Тбилиси, 1984.
60. **Георгиев В.**, Исследования по сравнительно-историческому языкознанию, Москва, 1958.
61. **Дворецкий И.**, Древнегреческо-русский словарь, т. 1-2, Москва, 1958.
62. **Джаукян Г.**, Очерки по истории дописьменного периода армянского языка, Ереван, 1967.
63. **Джаукян Г.**, Взаимоотношение индоевропейских, хурритско-урартских и кавказских языков, Ереван, 1967.

64. Зороастрийские тексты, Москва, 1997.
 65. Капанцян Г., Историко-лингвистические работы, Ереван, 1975.
 66. Симфония к синодальному изданию Библии, Москва, 1995.
 67. Septuaginta, Stuttgart, 1979.
 68. The Greek New Testament, Stuttgart, 1994.

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գրքերի, հանդեսների անվանումներ

- ԱԲ – Առձեռն բառարան հայկազնեան լեզուի
 Ագաթ. – Ագաթանգեղայ Պատմություն
 Աճ. Ստրաբ. – Աճառյան Հ., Ստրաբոն
 Անգ. Անպ. - Ամիրդովլաթ Ամասիացույ, Անգիտաց անպետ
 Անձ. բառ. - Աճառյան Հ., Հայոց անձնանունների բառարան
 Բիւզ. Քնն. – Բիւզանդացի Ն., Քննադատություն Հայբուսակի
 Բրսղ. վեց. – Բարսեղ կեսարացի, Յաղագս վեցարեայ արարչության
 Բուզ. – Փաւտոսի Բիւզանդացույ Պատմություն Հայոց
 Եզն. - Եզնրկայ Կողբացույ, Եղծ աղանդոց
 Եւագր. - Եւագրի Պոնտացույ Վարք և մատենագրությունք
 Խոր. - Մովսէս Խորենացի, Պատմություն Հայոց
 Կոր. - Կորին, Վարք Մաշտոցի
 ՀԱԲ - Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան
 ՀԼԲԲ – Հայոց լեզվի բարբառային բառարան
 ՀԼՊ – Հայոց լեզվի պատմություն
 ՀՀՇՏԲ – Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան
 ՂԲԲ - Սարգսյան Ա., Ղարաբաղի բարբառի բառարան
 ՄՀ – Մատենագիրք Հայոց
 ՄՀԲ - Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ., Միջին հայերենի բառարան
 ՆՀԲ - Նոր բառգիրք հայկազնեան լեզուի
 Շհնգ. - Մելիք-Շահնազարեանց Կ., Ուղեցոյց գործնական գինեգործության
 ՇՀՀԿԳԱ – Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն. գիտական աշխատություններ

ՊԲՀ – Պատմաբանասիրական հանդես
 ՋՀՄԲ - Ջահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան
 Սգր. – Սուրբ գիրք*
 Վստ – Գիրք վաստակոց
 Փարպ. - Ղազար Փարպեցի, Պատմութիւն Հայոց
 Зораст. - Зороастрийские тексты

2. Լեզուների անվանումներ

ակկադ. – ակկադերեն
 անգլ. – անգլերեն
 ասոր. – ասորերեն
 եբր. – եբրայերեն
 իտալ. – իտալերեն
 լատ. - լատիներեն
 լիտ. - լիտվերեն
 իսթ. – իսթերեն
 հայ. – հայերեն
 հ.-ե. – հնդեվրոպական
 հին պրուս. – հին պրուսերեն
 հին վ. գ. – հին վերին գերմաներեն
 հուն. – հունարեն
 մ. պրու. – միջին պարսկերեն
 պիլ. – պահլավերեն
 պրթ. – պարթևերեն
 ռուս. – ռուսերեն
 վրաց. – վրացերեն
 ուրարտ. – ուրարտերեն
 ֆրանս. - ֆրանսերեն

* Աստվածաշնչի համառոտագրությունները՝ ըստ ընդունված կարգի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան.....	4
Գլուխ I ԽԱՂՈՂԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ.....	8
1. Խաղող բառի գործառական առանձնահատկություններ.....	9
2. Խաղողի վազի անվանումներ.....	13
3. Խաղողի որթի (վազի) մասերի անվանումներ.....	15
4. Խաղողի մասերի անվանումներ.....	21
5. Խաղողատեսակների անվանումներ.....	22
Գլուխ II ԳԻՆԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ.....	26
1. Գինի բառի ծագման հարցը, գինի հասկացույցի այլ անվանումներ.....	26
2. Գինի բառի գործածության հաճախականությունը, բառակազմական յուրահատկությունները.....	30
3. Գինու տեսակների անվանումներ.....	33
4. Խմիչքի այլ տեսակների անվանումներ	
ա) օղի, ցքի.....	37
բ) գարեջուր.....	39
5. Հարբեցողություն, գինըմպություն.....	43
6. Գինու ամանի անվանումներ.....	51
Ամփոփում.....	59
Օգտագործված գրականության ցանկ.....	61
Համառոտագրություններ.....	66

ԼԱՎՐԵՆՏԻ ՇԱՀԵՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԳՐԱԲԱՐԻ ԲԱՌԱՊԱՇՏԱՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ
ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

(III մաս)

ԽԱՂՈՂԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ-ԳԻՆԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Կազմի ձևավորումը՝ Ա.Մուրադյանի

Հրատ. պատվեր № 856

Ստորագրված է տպագրության՝ 13.04.2018թ.:

Չափսը՝ 60 x 84 ¹/₁₆, թուղթը՝ N 1, 4,25 տպագր. մամուլ:

Տպաքանակը՝ 120 օրինակ:

Գինը՝ պայմանագրային:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան,
Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24: